



AGBU  
ARMENIA



ԱՆԻ ԴԱՎԹԱՆ

# ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՈԼՈՐՏՈՒՄ



Երևան, 2024



Funded by the European Union

AGBU  
ARMENIA



CreativeArmenia



ArtNexus  
Konstnärskommisionen  
The Swedish Arts Grants Committee



Katapult  
CREATIVE ACCELERATOR PROGRAM

ԱՆԻ ԴԱՎԹՅԱՆ

# ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՈԼՈՐՏՈՒՄ

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության և Շվեդիայի արվեստի դրամաշնորհների կոմիտեի ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության պատասխանատուն հեղինակն է, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության և Շվեդիայի արվեստի դրամաշնորհների կոմիտեի տեսակետները:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԱԽԱԲԱՆ</b>	<b>4</b>
<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b>	<b>6</b>
<b>ԳՈՐԾ՝ ԵԿԴ/0976/02/09</b>	<b>8</b>
<b>ԳՈՐԾ՝ ԵԴ/17154/02/22</b>	<b>11</b>
<b>ԳՈՐԾ՝ ԵԴ/34667/02/21</b>	<b>14</b>
<b>ԳՈՐԾ՝ ԵԴ/6702/02/21</b>	<b>16</b>
<b>ԳՈՐԾ՝ ԵԴ/12682/02/20</b>	<b>20</b>
<b>ԳՈՐԾ՝ ԵԴ/20730/02/19</b>	<b>26</b>
<b>ԳՈՐԾ՝ ԵԴ/6284/02/18</b>	<b>32</b>
<b>ԳՈՐԾ՝ ԵԿԴ/4050/02/15</b>	<b>38</b>
<b>ԳՈՐԾ՝ ԵՄԴ/0909/02/15</b>	<b>46</b>
<b>ԳՈՐԾ՝ ԵԿԴ/5586/02/14</b>	<b>49</b>
<b>ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԴԵՑՈՒՅՑ</b>	<b>54</b>

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը «Ստեղծարար Հայաստան» (Creative Armenia) մշակութային հիմնադրամի հետ համագործակցությամբ իրականացնում է «Կատապուլտ» ստեղծարար արքայադարձի ծրագիրը՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

Նպատակ հետապնդելով խթանելու ստեղծարար և մշակութային ոլորտների էկոհամակարգը Հայաստանում՝ «Կատապուլտը» հզորացնում է ստեղծագործ մասնագետներին՝ տրամադրելով կրթություն, ձեռնարկատիրական հմտություններ և տեսանելիություն, ինչպես նաև ձգտում է լրացնել առկա ծառայությունների, տեխնոլոգիաների, հաստատությունների և ենթակառուցվածքների բացերը՝ կայուն և բարգավաճ մշակութային արդյունաբերություն ապահովելու համար:

ՀԲԸՄ «Կատապուլտ» ստեղծարար արքայադարձի ծրագրի և շվեդական «ԱրտՆեքստուս» ծրագրի համագործակցության շրջանակում իրականացված Հայաստանի ստեղծարար ոլորտի կարիքների հետազոտության արդյունքում (Gargarian, A., Vahan, T., Aslanyan, A., Manasyan, H., Mkrtchyan, M. 2023. Armenia's Cultural and Creative Industries Economic Development Needs Assessment: Research for AGBU's "Katapult" Creative Accelerator Program. Unpublished) պարզվել է, որ չնայած Հայաստանում մտավոր սեփականության և հեղինակային իրավունքների հետ կապված օրենքների առկայությանը, հեղինակային իրավունքների խախտումները լուրջ խոչընդոտ են հանդիսանում Հայաստանի մշակութային և ստեղծարար ոլորտի գործարար միջավայրի համար:

---

Արձագանքելով այս խնդրին, «Կատապուլտը» և «ԱրտՆեքսուսը» համատեղ, Հայաստանում կազմակերպեցին իրավաբանների վերապատրաստում և ստեղծարար ոլորտի ներկայացուցիչների համար խորհրդատվությունների շարք, որոնք իրականացվեցին Մտավոր սեփականության իրավունքի հայ իրավաբանների ասոցիացիայի հետ համագործակցությամբ:

2023 թվականի ապրիլի 29-ին ՀԲԸՄ հայաստանյան գրասենյակի նախաձեռնությամբ կայացավ Մտավոր սեփականության գլոբալ ֆորումը, որը ներառվեց Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության միջոցառումների շրջանակում և անցկացվում է ամբողջ աշխարհում՝ ի նշանավորումն Մտավոր սեփականության համաշխարհային օրվա:

Այն համախմբել էր փորձագետների, մասնագետների և մտավոր սեփականության ու տեխնոլոգիաների ոլորտով հետաքրքրված անձանց: Ֆորումը կազմակերպել էին Մտավոր սեփականության իրավունքի հայ իրավաբանների ասոցիացիան և «Կատապուլտ» ստեղծարար արքստելերացիոն ծրագիրը շվեդական «ԱրտՆեքսուսի» աջակցությամբ:

Ներկայացվող ձեռնարկը ուղեցույց կծառայի ստեղծարար ոլորտի մասնագետների համար մտավոր սեփականության և հեղինակային իրավունքի պաշտպանության գործընթացում:

**Նարեկ Վ. Թովմասյան**  
*Արվեստագիտության թեկնածու*

Ստեղծարար ինդուստրիայի ներկայացուցիչները շատ հաճախ հարցնում են, թե ինչպե՞ս և ի՞նչ կարգով է պետք գրանցել հեղինակային իրավունքը: Արդյո՞ք կարելի է այլ անձին պատկանող հեղինակային իրավունքի օբյեկտն օգտագործել սեփական ստեղծագործական ծրագրերում: Արդյո՞ք հնարավոր է «վաճառել» հեղինակային իրավունքը, և արդյո՞ք, օրինակ, կտավը վաճառելիս մենք վաճառում ենք նաև հեղինակային իրավունքը:

Արդյո՞ք հեղինակային իրավունքի գրանցումը կպաշտպանի հեղինակի իրավունքները: Ի՞նչ ժամկետով են «գրանցվում» հեղինակային իրավունքները:

Ի՞նչ անել, եթե չունես գրանցված հեղինակային իրավունք, բայց քո իրավունքները ոտնահարվում են:

Ի՞նչը կարող է գրանցվել որպես հեղինակային իրավունք:

Ինչպե՞ս ճիշտ օգտագործել այլ ստեղծագործողի աշխատանքները քո ստեղծագործության մեջ:

Ո՞րն է հեղինակային իրավունքի ու ապրանքային նշանի տարբերությունը:

Ինչպե՞ս է աշխատում հեղինակային իրավունքը խմբային աշխատանք կատարելու ժամանակ:

Արդյո՞ք տարբերություն կա հեղինակային իրավունքի ու մտավոր սեփականության միջև և եթե այո, ապա ո՞րն է այդ տարբերությունը:

---

Արդյո՞ք կարելի է գրանցել հեղինակային իրավունք՝  
հետին թվով:

Արդյո՞ք հեղինակային իրավունքը տարածվում է նաև  
թվային ստեղծագործությունների վրա:

Ինչպե՞ս վերականգնել սեփական հեղինակային  
իրավունքները:

Արդյո՞ք հեղինակային իրավունքները փոխանցվում են  
ժառանգաբար:

Ի՞նչն է պաշտպանում հեղինակային իրավունքը:

Ուսումնասիրելով հեղինակային իրավունքների վերաբերյալ  
հայաստանյան դատական պրակտիկայում առկա վեճերը՝  
կստանանք այս և հեղինակային իրավունքին առնչվող այլ  
հարցերի պատասխանները:



ԳՈՐԾ՝  
ԵԿԴ/0976/02/09

 **ՀԱՅՑԿՈՐ**

 **ՊԱՏԱՄԽԱՆՈՂ**

 **ՊԱՀԱՆՋ**

Լիլիթ Տեր-Հակոբյան

«Ալեքսանդր Թամանյանի  
թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ,  
ԷՅ-ՋԻ-ԷԼ ՍՊԸ

25.10.2008թ. կնքած պահատվության  
պայմանագիրն անվավեր ճանաչելու  
պահանջի մասին

---

Յարոսլավլի հորեյանական ցուցահանդեսի մանրակերտը պատրաստվել է «Ալեքսանդր Թամանյանի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Թամանյանի նախաձեռնությամբ: Մանրակերտի պատրաստման ժամանակ վերջինս տրամադրել է իրեն պատկանող գծագրերն ու լուսանկարները: Մանրակերտը պատրաստվել է Կարեն Օքսուզյանին վստահված Երևանի պետական համալսարանի մեխանիկայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտի լաբորատորիայում: Մանրակերտն ամբողջովին պատրաստվել է Կարեն Օքսուզյանի կողմից անհատույց տրամադրված հումքից, նրան ու հիշյալ լաբորատորիային պատկանող գործիքների ու սարքավորումների անհատույց օգտագործմամբ, մանրակերտում կիրառված արույրե զարդանշանները Կ. Օքսուզյանի և Ա. Թամանյանի միջնորդությամբ անհատույց պատրաստվել են «Լատես» ՍՊԸ-ի կողմից՝ իրենց իսկ հումքով:

01.09.2006թ.-ին «Ալեքսանդր Թամանյանի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի և Լիլիթ Տեր-Յակոբյանի միջև կնքվել է աշխատանքային պայմանագիր, և Լիլիթ Տեր-Յակոբյանն աշխատել է թանգարանում, որպես ավագ գիտաաշխատող:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի 2006թ. նոյեմբերի 15-ի նիստում որոշվել է՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի հայցորդ Լիլիթ Մեսրոպի Տեր-Յակոբյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել հետևյալ ձևակերպումով՝ «Ալեքսանդր Թամանյանի՝ «Յարոսլավլի հորեյանական ցուցահանդեսային համալիրի» վերակազմությունը»:

Հեղինակային իրավունքների պաշտպանության «Հայիեղինակ» հասարակական կազմակերպության 17.10.2008թ.-ի հեղինակային իրավունքի օբյեկտի ի պահ հանձնման վերաբերյալ թիվ 07/383 գրության համաձայն՝ «Յարոսլավլի հորեյանական ցուցահանդես» /նախագծի հեղինակ՝ Ա. Թամանյան/ ստեղծագործությունը (հակիրճ նկարագրությունը՝ ցուցահանդեսի մանրակերտ) Լիլիթ Տեր-Յակոբյանի կողմից ի պահ է հանձնվել «Հայիեղինակ» հասարակական կազմակերպությունում և 15.10.2008թ.-ին ի պահ հանձնման 08/1301 համարի տակ ստացել գրանցում:

«Ալեքսանդր Թամանյանի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ը պահատվության պայմանագիր էր կնքել մանրակերտի վերաբերյալ, ինչն իր հերթին առաջացրել էր վեճ, քանի որ Լիլիթ Տեր-Յակոբյանը պնդում էր, որ որպես հեղինակ՝ թանգարանին նման իրավունք չի տրամադրել: Թանգարանի ներկայացուցիչները նշում էին, որ «Յարուսլավլի հոբելյանական ցուցահանդես համալիր» կառույցի նախագիծը կազմվել է 1913 թվականին, անձամբ հայ մեծ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի կողմից: Նախագծի հիման վրա նույն 1913 թվականին Յարուսլավլ քաղաքում կառուցվել է «Յարուսլավլի հոբելյանական ցուցահանդես համալիր» կառույցը, որը, սակայն, չի պահպանվել:

Գործի արդյունքում՝ դատարանը եկել է եզրահանգման, ըստ որի՝ «Յարուսլավլի հոբելյանական ցուցահանդես համալիրի» մանրակերտը չի հանդիսանում հեղինակային իրավունքի օբյեկտ, հետևապես, դրա նկատմամբ չեն կարող տարածվել Լիլիթ Տեր-Յակոբյանի հեղինակային իրավունքները, քանի որ մանրակերտը՝ մակետը, արդեն իսկ նախանմուշ, առարկայի փոքրացված նմուշ է, այն տեխնիկական միջոցների օգնությամբ ստացված արդյունք է և տվյալ դեպքում Ալեքսանդր Թամանյանի նախագծի պարզ վերարտադրությունն է: Այստեղ բացակայում են ստեղծագործության հատկանիշները:

## Ի՞նչ կարող ենք եզրակացնել տվյալ գործից:

- Հեղինակային իրավունքի գրանցում ՀՀ-ում հարկավոր չէ, ստեղծագործությունը համարվում է հեղինակային իրավունքի օբյեկտ՝ ստեղծման փաստով:
- «Յայիեղինակ» ՀԿ-ն կարող է ի պահ վերցնել ձեր ստեղծագործությունը, ինչը ձեզ համար ապացույցի դեր կխաղա դատարանում, եթե հեղինակ լինելու փաստը հարկավոր լինի ապացուցել, բայց, հեղինակ չհանդիսանալու դեպքում, «Յայիեղինակ» ՀԿ-ի կողմից տրված տեղեկանքը կարող է վիճարկվել, ինչպես եղել է ներկայացված գործի շրջանակներում:
- Ի պահ հանձնելը չի համարվում հեղինակային իրավունքի գրանցում, և դրա բացակայությունը ձեզ չի զրկում իրավական պաշտպանությունից:
- Եթե ձեր աշխատանքը այլ գործի վերարտադրություն է, այն չի կարող պաշտպանվել հեղինակային իրավունքով:

*Որպես հեղինակային իրավունքն «ամրագրելու» ավտերևատիվ տարբերակ, կարող էք հեղինակային իրավունքի օբյեկտը ստեղծելուց հետո այն ծրարի մեջ դնել և փոստով ուղարկել ինքներդ ձեզ, չբացելով ծրարը, մինչև անհրաժեշտություն կառաջանա բացելու և հիմնավորելու ստեղծագործության ստեղծման ժամանակահատվածը:*

ԳՈՐԾ՝  
ԵԴ/17154/02/22



**ՀԱՅՅՎՈՐՆԵՐ**



**ՊԱՏԱՍԽԱՆՈՂ**



**ՊԱՅԱՆՁ**

Ռուզան Լազարի Սարյան, Սոֆյա  
Լազարի Սարյան

Սոֆիա Էռնեստի Ղուլյան

Հեղինակային իրավունքները  
խախտող ստեղծագործության  
օգտագործումը արգելելու պահանջի  
մասին

Բուզան Լազարի Սարյանը և Սոֆյա Լազարի Սարյանը 11.04.2022թ.-ին հեղինակային իրավունքները խախտող ստեղծագործության օգտագործումն արգելելու պահանջով հայցադիմում են ներկայացրել դատարան՝ ընդդեմ Սոֆիա Էռնեստի Ղուլյանի:

Բուզան և Սոֆյա Սարյանների կողմից հայտնաբերվել է, որ առանց իրենց (որպես ժառանգ և իրավատեր) թույլտվության, Սոֆիա Ղուլյանը YouTube տեսաձայնագրությունների և սոցիալական մեդիա հարթակի իր պաշտոնական ալիքում տեղադրել է «ARTSAKH OUR HOME. HAY DOM. ՄԵՐ ՏՈՒՆ» վերնագրով տեսահոլովակ, որում որպես հիմնապատառ օգտագործվել են Մարտիրոս Սարյանի «Հայաստան» կտավի վերարտադրված և վերափոխված տարբերակները:

Դատական գործի շրջանակներում կողմերը եկել են հաշտության համաձայնության, ինչի արդյունքում սահմանվել է, որ կտավի վերարտադրված և վերափոխված տարբերակները կփոխարինվեն Մարտիրոս Սարյանին չպատկանող այլ ստեղծագործություններով, իսկ ժառանգները համաձայնել են հեղինակի գույքային իրավունքների խախտման համար դրամական հատուցում չպահանջել:

*Տվյալ իրավիճակում կողմերը կարողացել են հաշտության եզրեր գտնել և փոխհամաձայնության գալ:*


*Հեղինակային իրավունքը բաղկացած է երկու մասից, դրանք են գույքային և անձնական ոչ գույքային իրավունքները: Գույքային իրավունքների տիրապետողը մտավոր սեփականության այդ օբյեկտն իր հայեցողությամբ, ցանկացած ձևով և եղանակով օրինաչափ օգտագործելու բացառիկ իրավունք ունի:*

*Իսկ անձնական ոչ գույքային իրավունքները հետևյալ են՝ ստեղծագործության հեղինակ ճանաչվելու (հեղինակության իրավունք), ստեղծագործությունն իր անվամբ, կեղծանվամբ կամ անանուն օգտագործելու կամ այդպիսի օգտագործումը թույլատրելու (հեղինակի անվան իրավունք), ստեղծագործությունը հնարավոր աղավաղումներից, փոփոխություններից կամ հեղինակի համբավին կամ արժանապատվությանը վնաս հասցնող այլ ոտնձգություններից պաշտպանելու (հեղինակի համբավի և արժանապատվության իրավունք), ստեղծագործությունը ցանկացած ձևով առաջին անգամ հրատարակելու կամ այդ իրավունքն այլ անձի վերապահելու*

(հրապարակման իրավունք), ստեղծագործությունը հրապարակելու մասին նախկինում ընդունած որոշումից հրաժարվելու (հետկանչի իրավունք՝ դրա հետևանքով ստեղծագործությունն օգտագործելու իրավունք ունեցող անձանց պատճառած վնասները (ներառյալ՝ բաց թողնված օգուտը) հատուցելու պայմանով) իրավունք: Եթե ստեղծագործությունն արդեն իսկ լույս է ընծայվել, ապա հեղինակը պարտավոր է հրապարակայնորեն ծանուցել դրա հետկանչի մասին: Ընդ որում, նա իրավունք ունի ստեղծագործության նախկինում պատրաստված օրինակները շրջանառությանից հանել՝ հոգալով անհրաժեշտ ծախսերը: Անձնական ոչ գույքային իրավունքներն անօտարելի և անփոխանցելի են և պահպանվում են անժամկետ, բացառությամբ հետկանչի իրավունքի, որը գործում է միայն հեղինակի կյանքի ընթացքում:

Իսկ գույքային իրավունքները, ի տարբերություն անձնական ոչ գույքայինի, ժամկետով սահմանափակված են: Դրանք գործում են հեղինակի ամբողջ կյանքի ընթացքում և մահից հետո 70 տարիների ընթացքում: Հեղինակային իրավունքը փոխանցվում է ժառանգաբար: Կարևոր է, որ հեղինակները, առավել ևս՝ վիզուալ արտիստներն իրենց կյանքի ընթացքում վարեն ստեղծագործությունների ռեեստր, որպեսզի ժառանգներին հետագայում ավելի հեշտ լինի «կառավարել» ստեղծագործությունները և խուսափել կեղծումներից:

Տվյալ պարագայում գույքային իրավունքը իրավահաջորդներին է անցել հեղինակի մահից հետո, և նրանք են իրավասու կառավարել և տիրապետել այն:





ԳՈՐԾ՝  
ԵԴ/34667/02/21

 ԶԱՅՑՎՈՐՆԵՐ

 ՊԱՏԱՄԽԱՆՈՂ

 ՊԱՅԱՆՔ

Ռուզան Լազարի Սարյան, Սոֆյա  
Լազարի Սարյան

«ԷՅՉ ԷՄ ԹԱՅԼՍ» ՓԲԸ

Յեղիմասկային իրավունքների  
խախտումը վերացնելու պահանջի  
մասին

«Mane Tiles» ապրանքանիշի ներքո գործող ընկերությունը արտադրում և վաճառում է ափսեներ և պանրի պնակներ, որոնց վրա պատկերված են Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունները:

Սարյանի իրավահաջորդները դիմել են դատարան:

Ապրանքները զովագրվել են տարբեր ինտերնետային կայքէջերով՝ «Mane Tiles»-ի պաշտոնական կայքէջում ([www.manetiles.com](http://www.manetiles.com)), Սփյուռ տեղեկատվական համակարգում (<http://spyur.am/manetiles>), Ֆեյսբուք ([www.facebook.com/Mane Tiles](http://www.facebook.com/ManeTiles)) և Ինստագրամ ([www.instagram.com/manetiles](http://www.instagram.com/manetiles)) սոցիալական կայքերում:

Յեղիմասկի ստեղծագործությունների օգտագործմամբ ափսեների արժեքը 45.000 ՀՀ դրամ է, պանրի պնակների արժեքը՝ 25.000 ՀՀ դրամ: Mane Tiles-ը չի դիմել հեղիմասկի ժառանգներին և չունի հեղիմասկի

---

Դատարանը ժառանգների վրա է դրել այն փաստերի ապացուցման պարտականությունը, ըստ որոնց՝ պատասխանողն օգտագործել է Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունները, որով խախտվել են հայցվորների ժառանգած գույքային իրավունքները:

Դատարանը սկզբնապես ցանկացել է անդրադառնալ նշված փաստին՝ հաստատված կամ հերքված համարելու այն, թե արդյո՞ք պատասխանող ընկերությունն օգտագործել է Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունները, որի արդյունքում խախտվել են հայցվորների ժառանգած գույքային իրավունքները:

Տվյալ գործով որպես պատասխանող, այսինքն, որպես Սարյանի իրավունքները խախտող, նշվել է «ԷՅՉ ԷՄ ԹԱՅԼԱ» ՓԲԸ-ն: Միաժամանակ, որպես հեղինակային իրավունքների խախտման փաստերի ապացույցներ, դատարանին են ներկայացվել «manetiles.com» կայքից արտատպված քաղվածքները, որոնցում պատկերված են նկարներ:

Դատարանն արձանագրել է, որ նշված կայքից արտատպված էջերում առկա պատկերներով հաստատվում է միայն այն, որ տվյալ կայքի միջոցով իրականացվում է որոշակի իրերի վաճառք: Դատարանը նաև արձանագրել է, որ ժառանգների կողմից դատարանին չի ներկայացվել որևէ ապացույց, որից կհետևեր, որ տվյալ կայքի իրավատերը հանդիսանում է պատասխանող ընկերությունը, մինչդեռ, ըստ դատարանի հիշատակված որոշման՝ հայցվորները պետք է ապացուցեին, որ պատասխանող ընկերությունն է օգտագործում Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունները:

Տվյալ պահին գործը վճռաբեկ դատարանում է և դեռևս չունի վերջնական լուծում:

*Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ օրենսգրքով: Այսինքն, յուրաքանչյուր անգամ, երբ դուք դիմեք դատարան, դուք ստիպված կլինեք ապացուցել այն ամենը, ինչը պնդում եք:*



# ԳՈՐԾ՝ ԵԴ/6702/02/21

 **ՀԱՅՅՎՈՐ**

 **ՊԱՏԱՍԽԱՆՈՂ**

 **ՊԱՀԱՆՁ**

Ասքանազ Հրայրի Գևորգյան

ՄՀՄ ԳՐԱՏՈՒՆ ՍՊԸ-ի տնօրեն  
Մարտիրոս Մանվելյան

Հեղինակային պայմանագրի  
չկնքմամբ պայմանավորված  
պատճառված վնասների գումարը  
հատուցելու պահանջի մասին

Վազգեն Գևորգյանը Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի գրաբարից աշխարհաբար թարգմանության հեղինակն է: Իր մահից հետո տվյալ ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները անցել են Ասքանազ Գևորգյանին: Վերջինս դիմել է դատարան, նշելով, որ «ՄՀՄ Գրատուն» ՍՊ ընկերությունը, իր հետ չունենալով հեղինակային պայմանագիր, 2014-2019 թվականների ընթացքում ապօրինի տպագրել, տարածել և վաճառել է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի Վազգեն Ասքանազի Գևորգյանի կողմից կատարված թարգմանությունը՝ իրեն պատճառելով նյութական վնաս:

«ՄՀՄ Գրատուն» ՍՊ ընկերությունը Ասքանազ Գևորգյանի հետ հեղինակային պայմանագիր կնքել է միայն 01.10.2019 թվականին, վճարելով հոնորար՝ մեկ տարվա համար 100,000 ՀՀ դրամի չափով: Ընկերությունը հրաժարվել է փոխհատուցել 2014-2019 թվականների ընթացքում պոեմի թարգմանության տպագրության, տարածման և վաճառքի հետևանքով պատճառված վնասը:

Դատարանից ժառանգը խնդրել է «ՄՅՄ Գրատուն» ՍՊ ընկերության կողմից 2014-2019 թվականների ընթացքում վերոնշյալ պոեմի թարգմանությունն ապօրինի տպագրելու, տարածելու և վաճառելու հետևանքով իրեն պատճառված վնասի՝ 500,000 ՀՀ դրամի չափով հատուցում:

Ասքանազ Չրայրի Գևորգյանի՝ որպես Վազգեն Գևորգյանի իրավահաջորդի, և «ՄՅՄ Գրատուն» ՍՊ ընկերության միջև 01.10.2019 թվականին կնքված հեղինակային իրավունքի պայմանագրի համաձայն՝ հեղինակը կիրառողին է փոխանցում Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» ստեղծագործության Վազգեն Գևորգյանի թարգմանության օգտագործման ոչ բացառիկ իրավունք: Սույն պայմանագրի 1-ին կետում նշված իրավունքները հեղինակի կողմից փոխանցվում են կիրառողին 3 տարի ժամկետով՝ սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից սկսած: Սույն պայմանագրի 1-ին կետում նշված ցանկացած, մի քանի կամ բոլոր ձևերով ստեղծագործության օգտագործման համար կիրառողը պարտավորվում է վճարել 100,000 ՀՀ դրամի չափով յուրաքանչյուր տարվա համար՝ ստեղծագործության համապատասխան օգտագործման համար:

«ՄՅՄ Գրատուն» ՍՊԸ-ն նշում է, որ ժառանգի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որը կփաստեր, որ «ՄՅՄ Գրատուն» ՍՊ ընկերության կողմից կատարվել է իրավունքի խախտում, և նյութը տպագրվել է առանց իր համաձայնության, ինչպես նաև նշում է, որ ժառանգը չի ներկայացրել ապացույց առ այն, որ նշված թարգմանությունը հեղինակային իրավունքի օբյեկտ է:

Աշոտ Չրայրի Գևորգյանի՝ որպես Վազգեն Գևորգյանի իրավահաջորդի, և «ՄՅՄ Գրատուն» ՍՊ ընկերության միջև 25.08.2017 թվականին կնքված հեղինակային իրավունքի պայմանագրի համաձայն՝ հեղինակը կիրառողին է փոխանցում Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» ստեղծագործության Վազգեն Գևորգյանի թարգմանության օգտագործման ոչ բացառիկ իրավունք: Սույն պայմանագրի 1-ին կետում նշված իրավունքները հեղինակի կողմից փոխանցվում են կիրառողին 3 տարի ժամկետով՝ սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից հաշված: Սույն պայմանագրի 1-ին կետում նշված ցանկացած, մի քանի կամ բոլոր ձևերով ստեղծագործության օգտագործման համար կիրառողը պարտավորվում է տալ 20 հատ «Նարեկ» գիրք յուրաքանչյուր տարվա համար՝ ստեղծագործության համապատասխան օգտագործման համար:

Դատարանն իր որոշման մեջ արձանագրել է, որ Աշոտ Չրայրի Գևորգյանի՝ որպես Վազգեն Գևորգյանի իրավահաջորդի, և «ՄՅՄ Գրատուն» ՍՊ ընկերության միջև 25.08.2017 թվականին կնքված հեղինակային իրավունքի պայմանագրի համաձայն՝ հեղինակը կիրառողին է փոխանցում Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» ստեղծագործության Վազգեն

Գևորգյանի թարգմանության օգտագործման ոչ բացառիկ իրավունք:  
Սույն պայմանագրի 1-ին կետում նշված իրավունքները հեղինակի կողմից փոխանցվում են կիրառողին 3 տարի ժամկետով՝ սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից սկսած: Սույն պայմանագրի 1-ին կետում նշված ցանկացած, մի քանի կամ բոլոր ձևերով ստեղծագործության օգտագործման համար կիրառողը պարտավորվում է տալ 20 հատ «Նարեկ» գիրք յուրաքանչյուր տարվա համար՝ ստեղծագործության համապատասխան օգտագործման համար:

Դատարանը եկել է այն եզրահանգման, որ «Հայհեղինակ» հեղինակային և հարակից իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարվող հասարակական կազմակերպությունում գրանցված «Մատյան ողբերգության» ստեղծագործության թարգմանության նկատմամբ բացառիկ գույքային իրավունքները ժառանգաբար համապարփակ իրավահաջորդության կարգով անցել են հայցվոր Ասքանազ Գևորգյանին:

Միաժամանակ, դատարանն արձանագրել է, որ պատասխանողը, առանց իրավատիրոջ՝ հայցվոր Ասքանազ Գևորգյանի թույլտվության, 25.08.2017 թվականին հեղինակային իրավունքի պայմանագիր է կնքել Աշոտ Գևորգյանի հետ, որով պատասխանողին երեք տարի ժամկետով փոխանցվել է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» ստեղծագործության վազգեն Գևորգյանի թարգմանության օգտագործման ոչ բացառիկ իրավունքը:

Ի վերջո, դատարանը եկել է այն եզրահանգման, որ պատասխանողը, առանց իրավատիրոջ՝ հայցվոր Ասքանազ Գևորգյանի թույլտվության, 2017 և 2018 թվականներին է օգտագործել «Հայհեղինակ» հասարակական կազմակերպությունում գրանցված «Մատյան ողբերգության» ստեղծագործության թարգմանությունը: Դատարանը եզրակացրել է, որ ժառանգը իրավունք ուներ իրավունքները խախտողից՝ պատասխանողից, պահանջել հատուցել առանց իր թույլտվության 2017 և 2018 թվականներին «Հայհեղինակ» հասարակական կազմակերպությունում գրանցված «Մատյան ողբերգության» ստեղծագործության թարգմանությունն օգտագործելու արդյունքում իր կրած վնասները, այդ թվում՝ փոխհատուցում, որն իրավատերը կստանար, եթե իրավախախտը թույլտվություն ունենար հեղինակային իրավունքի օբյեկտի օգտագործման համար:

Դատարանը հայցը բավարարել է մասնակիորեն և պատասխանող «ՄՅՄ Գրատուն» ՍՊ ընկերությանը պարտավորեցրել է հայցվոր Ասքանազ Գևորգյանին վճարել 200,000 ՀՀ դրամ՝ որպես առանց իրավատիրոջ թույլտվության «Մատյան ողբերգության» ստեղծագործության թարգմանությունն օգտագործելու համար փոխհատուցում: Հայցը մնացած մասով մերժել է:

Եթե հեղինակն իրականացնում է ստեղծագործության թարգմանություն, ստանալով համապատասխան թույլտվություն ստեղծագործությունը թարգմանելու համար կամ հանրային սեփականություն համարվող ստեղծագործություն է թարգմանում, ապա նա համարվում է ստեղծագործության թարգմանության հեղինակ, և թարգմանության հետ ցանկացած գործողություն կատարելու համար պետք է ստանալ հեղինակի թույլտվությունը կամ, եթե հեղինակը մահացել է, հեղինակի իրավահաջորդների թույլտվությունը: Տվյալ պարագայում, թարգմանությունը հանդիսանում է ածանցյալ ստեղծագործություն (ածանցյալ ստեղծագործությունների հեղինակներ են համարվում այլ անձանց ստեղծագործությունները վերամշակած անձինք՝ թարգմանիչները, ժողովածուներ և այլ հավաքածո ստեղծագործություններ կազմողները):

Ինչ վերաբերում է փոխհատուցմանը, քանի որ ժառանգը դատարանից վնասի հատուցում էր պահանջում և ներկայացրել էր միայն երկու տարվա օգտագործման ապացույցներ, հետևաբար, դատարանը փոխհատուցել է նշված ժամանակաշրջանի համար:

Ըստ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝ «Առանց իրավատիրոջ թույլտվության՝ ստեղծագործությունն օգտագործող անձը պարտավոր է իրավատիրոջը հատուցել նրա կրած վնասները: Իրավատիրոջ պահանջով նրան կարող է վճարվել՝ **ա)** հոնորարի կամ վարձատրության կրկնակի չափով փոխհատուցում, որը իրավատերը կստանար, եթե իրավախախտողը թույլտվություն ունենար հեղինակային իրավունքի օբյեկտի օգտագործման համար, կամ **բ)** խախտման հետևանքով պատճառած փաստացի վնասին համարժեք հատուցում, ներառյալ՝ բաց թողնված օգուտը»:

Տվյալ պարագայում, կարող ենք եզրահանգել, որ հայցվորը նաև հնարավորություն ուներ դիմելու հոնորարի կրկնակի չափով փոխհատուցում ստանալու համար, քանի որ «ՄՅՄ Գրատուն» ՍՊ ընկերությունը նույն հեղինակային իրավունքի օգտագործման համար կնքել է պայմանագիր և վճարել գումար:

**ԳՈՐԾ՝**  
**ԵԴ/12682/02/20**



 **ՀԱՅՅՎՈՐ**

 **ՊԱՏԱՍԽԱՆՈՂ**

 **ՊԱՀԱՆՋ**

Սուսաննա Գուրգենի Հովհաննիսյան

Սամվել Անուշավանի Հարոյան

Հեղինակային իրավունքի  
խախտումը վերացնելու պահանջի  
մասին

---

Հայ մեծ գրող Յովհաննես Թումանյանի մասին 12 մենագրության, 50 գրքի (համահեղինակությամբ) և 224 գիտական հոդվածների հեղինակ, բանասիրական գիտությունների դոկտոր Սուսաննա Յովհաննիսյանին 2018թ. նոյեմբերի առաջին օրերին դիմել է Սամվել Հարոյանը և առաջարկել գիրք գրել Յովհաննես Թումանյանի մասին: Սուսաննա Յովհաննիսյանը համաձայնել է գիրք գրել և դրա հրատարակությունը վստահել Սամվել Հարոյանին: Կողմերը **բանավոր** պայմանավորվել են առ այն, որ գրքի հրատարակման ծախսերը հոգալու է Սամվել Հարոյանը, իսկ դրա դիմաց Սուսաննա Յովհաննիսյանը հրաժարվել է հեղինակային վարձատրության իր իրավունքից:

2018թ. դեկտեմբերից մինչև 2019թ. փետրվարի 4-ը էլեկտրոնային փոստի միջոցով Սուսաննա Յովհաննիսյանը Սամվել Հարոյանին է ուղարկել «Յովհաննես Թումանյան Ամենայն հայոց բանաստեղծը» վերտառությամբ գրքի էլեկտրոնային տարբերակը:

12.04.2019թ. Սամվել Հարոյանը Հայաստանի ազգային գրադարան ՊՈԱԿ ներկայացրել է հեղինակային հրատարակությունը ինդեքսավորելու մասին դիմում, որի կողմից իրեն տրամադրվել են ISBN, ՀՏԴ, ԳՄԴ ցուցիչները, որոնք տրամադրվում են բացառապես հեղինակին:

2019թ. հունիսի 3-ին Սամվել Զարոյանը Սուսաննա Զովհաննիսյանին հրավիրել է գրքի շնորհանդեսին, որտեղ Սուսաննա Զովհաննիսյանին փոխանցել է գրքի տպագրված օրինակը, որում որպես հեղինակ ստեղծագործության վերնագրի կողքին նշվել է Սամվել Զարոյանի անունը, և հեղինակային իրավունքի պաշտպանության © նշանը դրվել է Սամվել Զարոյանի անվան դիմաց: Սուսաննա Զովհաննիսյանը գրքում հիշատակվել է որպես ընդամենը հեղինակային նյութերի տրամադրող և ոչ հեղինակ:

Գիրքը տպագրվել է «Տիգրան Մեծ» հրատարակչությունում, 500 օրինակ տպաքանակով:

2019թ.-ին «Նոյան Տապան» ՍՊ ընկերությանը՝ գրախանութին, Սամվել Զարոյանի կողմից տրամադրվել է գրքի 8 օրինակ, որից 7-ը 04.12.2019թ. դրությամբ վաճառվել է՝ յուրաքանչյուրը 11,900 ՀՀ դրամով:

05.06.2019թ. Սամվել Զարոյանը «Բուկինիստ» ՍՊ ընկերությանը՝ գրախանութին, տրամադրել է գրքի 30 օրինակ, որից 20-ը 04.12.2019թ. դրությամբ վաճառվել է՝ յուրաքանչյուրը 11,900 ՀՀ դրամով:

Հատկանշական է, որ գրքի վերջին էջում հենց Սամվել Զարոյանն է ընդունել, որ ինքը կազմել և հրատարակել է գիրքը, իսկ հեղինակային նյութերը տրամադրել է Սուսաննա Զովհաննիսյանը:

Սուսաննա Զովհաննիսյանը դատարանում պնդում էր, որ նման պայմաններում իր հեղինակային իրավունքների խախտումները կարող են վերացվել ոչ միայն նույն գիրքն արդեն իր անվամբ հրատարակելու միջոցով, այլ նաև արդեն հրատարակված օրինակների վաճառքն արգելելու, իսկ նոր տպաքանակում՝ նաև 2019թ. հրատարակված գրքի մասին նշում կատարելու միջոցով: Վերը նշվածը հաշվի առնելով, Սուսաննա Զովհաննիսյանը իր խախտված իրավունքի վերականգնումը հնարավոր է համարել այն դեպքում, երբ, ի թիվս այլ գործողությունների, Սամվել Զարոյանի կողմից կտպագրվի նույն քանակի և նույն որակի գիրք՝ պարունակելով նշում այն մասին, որ նախկինում առկա և արդեն իսկ տարածված տպաքանակում տեղի է ունեցել սխալ, և որպես գրքի հեղինակ նշվել է ոչ թե ստեղծագործության հեղինակը, այլ կազմողը և հրատարակիչը:

«Չովհաննես Թումանյան՝ Ամենայն հայոց բանաստեղծը» գրքի առաջին էջում որպես հեղինակ կշել է Սամվել Զարոյանը, իսկ անվան կողքին դրվել է հեղինակային իրավունքների պաշտպանության © նշանը: Նշված էջում կատարվել է նշում հետևյալ բովանդակությամբ՝ «Հատուկ շնորհակալություն ՍՈՒՍԱՆՆԱ ԶՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ հեղինակային նյութեր տրամադրելու համար», կատարվել է նշում նաև հետևյալ բովանդակությամբ՝ Զարոյան Սամվել, Ամենայն հայոց բանաստեղծը. Չովհաննես Թումանյան/ Ս.Զարոյան.-Եր.: Զեդ. Զրատ., 2019.-400 էջ: Նշված գրքի վերջին էջում կատարվել է նշում հետևյալ բովանդակությամբ՝ «Կազմեց և հրատարակության պատրաստեց ՍԱՄՎԵԼ ԶԱՐՈՅԱՆԸ, հեղինակային նյութերը՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԶՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ...»

Դատարանն իր որոշման մեջ արձանագրում է, որ «Չովհաննես Թումանյան՝ Ամենայն հայոց բանաստեղծը» վերտառությամբ գրքի հեղինակ է հանդիսանում Սուսաննա Գուրզենի Չովհաննիսյանը, այն ստեղծելու փաստի ուժով, որպիսի հանգամանքը հաստատվում է դատարան ներկայացված էլեկտրոնային կրիչով, որի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հայցվորն իր էլեկտրոնային էջից պատասխանողի էլեկտրոնային էջին է ուղարկել նշված գրքի համար հիմք հանդիսացած նյութերի էլեկտրոնային տարբերակը:

Դատարանը նաև արձանագրել է, որ «Չովհաննես Թումանյան՝ Ամենայն հայոց բանաստեղծը» վերտառությամբ գրքի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Սամվել Զարոյանը ինքն էլ ընդունում է Սուսաննա Չովհաննիսյանի՝ նշված գրքի հեղինակ հանդիսանալու հանգամանքը, քանի որ ինչպես գրքի առաջին էջում, այնպես էլ վերջին էջում արձանագրվել է, որ հեղինակային նյութերը տրամադրվել են Սուսաննա Չովհաննիսյանի կողմից:

Դատարանը վերոգրյալ հոդվածների վերլուծության արդյունքում արձանագրել է, որ հեղինակային նյութեր տրամադրողը նույնանում է հեղինակի հետ:





Ուսումնասիրելով «Հովհաննես Թումանյան՝ Ամենայն հայոց բանաստեղծը» վերտառությամբ գիրքը և պատասխանողին ուղարկված նյութերի էլեկտրոնային նյութերը՝ դատարանն արձանագրել է, որ Սուսաննա Հովհաննիսյանի ուղարկած ստեղծագործությունը նույնությամբ արտացոլված է գրքում, բացառությամբ մի քանի էջերի, սակայն ավելացված էջերը չեն պարունակում Սամվել Հարոյանի ստեղծագործական միտքը, քանի որ Սամվել Հարոյանը գրքի մի քանի էջի սահմաններում ընդամենը ավելացրել է տեղեկատվական նյութ Հովհաննես Թումանյանի զավակների մասին, ինչպես նաև լուսանկարների վերաբերյալ մեկնաբանություններ:

Նյութերում առկա չեն գրքի 327-331 էջերում նշված տեղեկությունները Թումանյանի զավակների մասին, որոնք առկա են համացանցում և, բացի այդ, տեղեկությունները նույնպես առկա են հայցվորի կողմից ուղարկված գրականության ցանկում, մասնավորապես՝ Սաֆրազբեկյան Ի., Թումանյանի ընտանիքի նամակակնի, Եր., Էդիթ Պրինտ, 2009, էջեր 211-217: Նյութերում առկա է տեղեկություն Անդրանիկի կոչի և Թումանյանի արձագանքի մասին, Թումանյանի արձագանքը մեջբերված է բառացի, սակայն մեջբերված չէ գրքի 204-205 էջերում առկա զորավար Անդրանիկի կոչը և «Արմենիա» ՀԸ թղթակից Եղիշեի խոսքերը, որոնք չեն կարող հանդիսանալ հեղինակային իրավունքի օբյեկտ:

Դատարանն արձանագրել է նաև այն փաստը, որ նյութերում հանդիպում են նաև առանձին նախադասություններ, որոնցում փոխվել են բառեր կամ ավելացվել նախադասություններ: Օրինակ՝ նյութերում առկա «Թումանյանը և կերպարվեստը» վերնագիրը գրքում արտացոլվել է որպես «Գեղեցիկ իրերի սիրահարը» (էջ 352):

Այդուհանդերձ, դատարանը չի անդրադառնում նյութերի շարադրանքի առանձին փոփոխություններին, քանի որ Սուսաննա Հովհաննիսյանը չի ներկայացրել իր ստեղծագործությունը աղավաղումներից պաշտպանելու պահանջ:

Դատարանը համարել է, որ Սուսաննա Հովհաննիսյանի պահանջն ամբողջությամբ հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Դատարանը միաժամանակ նկատի ունենալով, որ արդեն իսկ իրականացվել է գրքի վաճառք, և ըստ Սուսաննա Յովհաննիսյանի՝ օբյեկտիվորեն չկա հնարավորություն պարզելու, թե 500 օրինակ տպաքանակով հրատարակված գրքի քանի օրինակն է արդեն փոխանցվել այլ անձանց, հետևաբար, գիրքը տիրապետող քանի անձ և նրանց շրջապատի անձինք են թյուրիմացաբար կարծում, թե գրքի հեղինակը Սամվել Չարոյանն է, ուստի դատարանը համարում է, որ պետք է Սամվել Չարոյանին պարտավորեցնել իր կողմից տպագրելու և քանակի և նույն որակի գիրք՝ կատարելով նշում այն մասին, որ նախկինում առկա և արդեն իսկ տարածված տպաքանակում տեղի է ունեցել սխալ, և որպես գրքի հեղինակ նշվել է ոչ թե ստեղծագործության հեղինակը, այլ կազմողը և հրատարակիչը:

*Տվյալ դատական գործի շրջանակներում տեսնում ենք երկու էական բան բոլոր հեղինակների համար: Նախ՝ պարտադիր չէ, որ ձեր ստեղծագործությունը ինչ-որ տեղում գրանցված լինի, որ ստանա պաշտպանություն. դրա ստեղծման փաստը և այդ մասին տեղեկատվությունը բավարար են: Երկրորդ՝ անկախ բոլոր բանավոր պայմանավորվածություններից, անհրաժեշտ է նմանատիպ աշխատանքներ կատարելիս ունենալ պայմանագիր, որտեղ հստակ կսահմանվեն կողմերի իրավունքները, պարտավորությունները և այլն: Տվյալ պարագայում, եթե առկա լիներ պայմանագիր, դատարան դիմելուց այլևս ապացուցման բեռը այդքան մեծ չէր լինի, և հնարավոր կլիներ նախատեսել նաև տուգանքներ հեղինակային իրավունքի խախտման համար:*

*Տվյալ գործի շրջանակներում դատարանը նաև անդրադառնում է ստեղծագործությունը աղավաղելուն, այսինքն՝ ստեղծագործությունը հնարավոր աղավաղումներից, փոփոխություններից կամ հեղինակի համբավին կամ արժանապատվությանը վնաս հասցնող այլ ոտնձգություններից պաշտպանելու իրավունքին (հեղինակի համբավի և արժանապատվության իրավունք), որից, սակայն, հայցվորը չէր օգտվել:*

 ՀԱՅՅՎՈՐ

 ՊԱՏԱՄԽԱՆՈՂ

 ՊԱՀԱՆՋ

Արթուր Յենրիկի Գալստյան

Գևորգ Տիգրանի Մարտիրոսյան

Մտավոր սեփականության օբյեկտ հանդիսացող երգն առանց իրավատիրոջ թույլտվության օգտագործելն արգելելու, ինչպես նաև բացառիկ իրավունքների խախտման համար հիմք ծառայած և նման խախտման արդյունքում ստեղծված տեսահոլովակը բոլոր կայքերից ջնջելու, ինչպես նաև երգն առանց իրավատիրոջ թույլտվության պայմանագրի օգտագործման արդյունքում պատճառված վնասը հատուցելու պահանջի մասին

Արթուր Գալստյանը հայցադիմում է ներկայացրել ընդդեմ Գևորգ Մարտիրոսյանի՝ մտավոր սեփականության օբյեկտ հանդիսացող երգն առանց իրավատիրոջ թույլտվության օգտագործելն արգելելու, ինչպես նաև բացառիկ իրավունքների խախտման համար հիմք ծառայած և նման խախտման արդյունքում ստեղծված տեսահոլովակը ջնջելուն և երգն առանց իրավատիրոջ թույլտվության պայմանագրի օգտագործման արդյունքում պատճառված վնասի՝ 4,000,000 ՀՀ դրամ հատուցելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

01.03.2001թ.-ին հեղինակ-կատարող Արթուր Գալստյանը «Հայհեղինակ» հասարակական կազմակերպությունում ի պահ է հանձնել իր հեղինակային իրավունքը, այդ թվում «Ով է Նա» երգի հեղինակային իրավունքը՝ 7/497 թվի ներքո: 2019 թվականի մարտ-ապրիլ ամիսներին Արթուր Գալստյանին զանգահարել է Գևորգ Մարտիրոսյանը, որը, ներկայանալով որպես երգիչ, ցանկություն է հայտնել կատարել Արթուր Գալստյանի երգերից, վերջինս էլ նշել է, որ ուրախ է այդ կապակցությամբ, սակայն պետք է հանդիպեն, քննարկեն: Հանդիպում տեղի չի ունեցել, սակայն 06.06.2019 թվականին տեղի է ունեցել Արթուր Գալստյանի հեղինակային երգի պրեմիերան Գևորգ Մարտիրոսյանի կատարմամբ: Օրեր անց բողոք-հայտ է ուղարկվել youtube.com տեսանախագծային կայքին, որով խնդրել են Գևորգ Մարտիրոսյանի տեսահոլովակի ցուցադրումը արգելափակել հեղինակային իրավունքի խախտման հիմքով:

Դատարան դիմելիս Արթուր Գալստյանը նշել է, որ առանց հեղինակի համաձայնության, օգտագործողն իրավասու չէ ստեղծագործության օգտագործմամբ եկամուտներ ստանալ:

Քանի որ երգի նկատմամբ բացառիկ իրավունք ունեցող սուբյեկտը դրա հեղինակն է՝ Արթուր Գալստյանը, ուստի, առանց իրավատիրոջ թույլտվության և համապատասխան պայմանագրի կնքման, մտավոր սեփականության բացառիկ օբյեկտ հանդիսացող երգն օգտագործվել է առանց իրավատիրոջ թույլտվության, որպիսի իրողության ուժով արդեն իսկ առկա է վնաս:

Արթուր Գալստյանն իր երգը գնահատել է 2,000,000 ՀՀ դրամ: Այսինքն, եթե Գևորգ Մարտիրոսյանը չխախտեր Արթուր Գալստյանի իրավունքը, և նրանց միջև կնքվեր համապատասխան պայմանագիր, ապա Արթուր Գալստյանը կստանար 2,000,000 ՀՀ դրամի եկամուտ, ինչն էլ չի իրականացել: Ի պատասխան սույն հայցին, Գևորգ Մարտիրոսյանը նշել է, որ մինչ «Ով է Նա» երգի իր կողմից կատարումը և երգի հիման վրա տեսահոլովակի նկարահանումը, 2019 թվականի մարտ ամսին նա հեռախոսային խոսակցություն է ունեցել Արթուր Գալստյանի հետ, հայտնել իր ցանկության մասին, ներկայացրել ինչպիսի կատարում է լինելու իր կողմից, և որ

ցանկություն ունի նաև նկարահանել տեսահոլովակ: Արթուր Գալստյանը մեծ ուրախությամբ ընդունել է պատասխանողի առաջարկը, նույնիսկ նշել, որ մեծ ուրախությամբ է ընդունում, որ երիտասարդ սերունդը գնահատում է իր հեղինակած երգը, և տվել է իր համաձայնությունը՝ նույնիսկ ավելորդ համարելով այդ մասին գրավոր պայմանագրի ձևակերպումը:

Դրանից հետո Գևորգ Մարտիրոսյանը ձեռնամուխ է եղել տեսահոլովակի նկարահանմանը, ծախսել է մեծ գումար: Այնուհետև, տեսահոլովակը տեղադրվել է Մարտիրոսյանի յութուբյան պաշտոնական ալիքում, որից հետո վերջինիս զանգահարել է մի կին և պահանջել հանդիպում՝ նշված կատարման հետ կապված: Տեղի ունեցած հանդիպման ժամանակ քննարկվել է երգի կատարման հետ կապված Արթուր Գալստյանին պատճառված վնասների հատուցման հարցը, սակայն Գևորգ Մարտիրոսյանը հայտնել է, որ տեսահոլովակը նոր է տեղադրվել համացանցում, որևէ գումար դրա դիմաց չի ստացել, որևէ միջոցառման ժամանակ այդ երգը չի կատարել, որի դիմաց կտրամադրվեր հատուցում:

Գևորգ Մարտիրոսյանը նաև հայտնել է, որ դատական վեճի քննման պահին արդեն յութուբյան իր պաշտոնական ալիքից տեսահոլովակը հեռացվել է: Հայտնել է նաև, որ տեսահոլովակը հեռացվել է հենց Արթուր Գալստյանի կամ վերջինիս լիազորված անձի կողմից Յութուբի ուղարկված դիմումի հիմքով, որը Գևորգ Մարտիրոսյանը համարել է անընդունելի, քանի որ, եթե նրանք դիմելու էին դատական պաշտպանության, ապա այդ վեճը պետք է լուծում ստանար դատարանում, այլ ոչ թե իրենք միջոցներ ձեռնարկեին տեսահոլովակը Յութուբից հեռացնելու համար:

Գևորգ Մարտիրոսյանը նշել է, որ առկա չէ որևէ ապացույց, որ ինքը նշված երգի կատարումից ստացել է հոնորար կամ վարձատրություն, ավելին, երբեք որևէ միջոցառման ժամանակ երգը չի կատարել, որևէ նյութական կրիչով չի օգտագործում տեսահոլովակը, իր երգացանկում երբևէ չի ներառել և չի պատրաստվում ներառել այդ կատարումը, ուստի անհասկանալի է, թե ինչի համար պետք է հատուցում տրամադրել Արթուր Գալստյանին, կամ ինչպե՞ս պետք է պատասխանողին արգելվի երգի օգտագործումը, եթե չի կատարել և չի կատարում, և համացանցում իր պաշտոնական որևէ էջում տեսահոլովակը տեղադրված չէ:

Դատարանն իր որոշման մեջ արձանագրել է, որ սույն քաղաքացիական գործով վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանք է հանդիսացել փաստն այն մասին, որ Արթուր Գալստյանը «Ով է Նա» երգի հեղինակն է, ինչը դատարանին ներկայացված դատավարական փաստաթղթով ընդունել է պատասխանող Գևորգ Մարտիրոսյանը: Նշված հանգամանքը հաստատվում է նաև «Հայկեղանակ» հասարակական կազմակերպության կողմից 19.05.2004

թվականին տրված թիվ 07/126 գրությամբ:

Քննարկվող պարագայում Արթուր Գալստյանը ներկայացրել, իսկ Գևորգ Մարտիրոսյանը դատարանին ներկայացրած դատավարական փաստաթղթով ընդունել է փաստն այն մասին, որ Արթուր Գալստյանի հեղինակած «Ով է նա» երգը կատարվել և հանրությանը հաղորդվել է Գևորգ Մարտիրոսյանի կողմից, ինչը դրսևորվել է երգի հիման վրա նկարահանված տեսահոլովակը YouTube կայքի @gevorgmusic պաշտոնական ալիքում/էջում տեղադրելու միջոցով:

Գործի քննությամբ հիմնավորվել է նաև այն, որ Արթուր Գալստյանի դիմումի հիման վրա YouTube կայքի @gevorgmusic պաշտոնական ալիքում/էջում տեղադրված տեսահոլովակը արգելափակվել է կայքի կառավարչի կողմից, և մերժվել է Գևորգ Մարտիրոսյանի խնդրանքը այն վերականգնելու վերաբերյալ: Դատարանն ընդգծել է նաև, որ դատական ակտի կայացման օրվա դրությամբ հիշյալ տեսահոլովակը պատասխանողի պաշտոնական ալիքում բացակայում է: Դատարանը հարկ է համարել նշել նաև, որ թե՛ Արթուր Գալստյանը, թե՛ Գևորգ Մարտիրոսյանն ընդունում են փաստն այն մասին, որ Արթուր Գալստյանի հեղինակած երգի օգտագործման վերաբերյալ կողմերի միջև գրավոր կնքված պայմանագիր չի եղել:

Դատարանը նշել է, որ Գևորգ Մարտիրոսյանի կողմից առանց Արթուր Գալստյանի թույլտվության օգտագործվել է վերջինիս հեղինակած ստեղծագործությունը, որպիսի փաստը համադրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1124-րդ հոդվածում ամրագրված հեղինակի՝ իր ստեղծագործության երրորդ անձանց կողմից օգտագործումը արգելելու բացառիկ իրավունքի հետ, դատարանը որոշել է, որ պատասխանողի կողմից Արթուր Գալստյանի հեղինակած «Ով է նա» երգի օգտագործումն արգելելու պահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Անդրադառնալով տեսահոլովակը ջնջել պարտավորեցնելու պահանջին՝ դատարանն արձանագրել է, որ, ինչպես վերը նշվել է, տեսահոլովակը հայցվորի դիմումի հիման վրա արգելափակվել է կայքի կառավարչի կողմից, դատական ակտի կազմման օրվա դրությամբ այն Գևորգ Մարտիրոսյանի պաշտոնական էջում/ալիքում տեղադրված չէ, ուստի տեսահոլովակը ջնջելուն պարտավորեցնելու պահանջն առարկայագուրկ է, ուստի՝ ենթակա մերժման:

Քննության առնելով 4,000,000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջը՝ դատարանը նշել է հետևյալը.

«...Մինչդեռ քննարկվող պարագայում պարզ չէ՝ Արթուր Գալստյանի կողմից որպես վարձատրության կամ հոնորարի գումար, որի կրկնակին հատուցելու պահանջ է ներկայացվել, 2,000,000 ՀՀ դրամի մատնանշումը ինչ չափանիշների կամ հանգամանքների հաշվառմամբ է որոշվել, արդյոք հիշյալ գումարի վերաբերյալ պետք է կնքվեր պայմանագիր, ուստի դրա կրկնակին հատուցելու պահանջը նույնպես անհիմն է և ենթակա մերժման»:

Դատարանն անդրադարձել է նաև Գևորգ Մարտիրոսյանի այն փաստարկին, որ առկա է եղել Արթուր Գալստյանի բանավոր համաձայնությունը ստեղծագործությունն օգտագործելու վերաբերյալ, և նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1135-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ հեղինակային պայմանագիրը պետք է կնքվի գրավոր, իսկ նույն օրենսգրքի 298-րդ հոդվածը սահմանում է հասարակ գրավոր ձևը չափապանելու հետևանքները, այն է՝ գործարքի հասարակ գրավոր ձևը չափապանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատում գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից: Սակայն կողմերին չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից:

Օրենքում կամ կողմերի համաձայնությունում ուղղակի նշված դեպքերում գործարքի հասարակ գրավոր ձևը չափապանելը հանգեցնում է դրա անվավերության: Ուստի, դատարանը որոշել է արգելել Գևորգ Մարտիրոսյանին՝ օգտագործելու Արթուր Գալստյանի հեղինակած «Ով է նա» ստեղծագործությունը՝ բառերը և երաժշտությունը: Հայցապահանջը մնացած մասով մերժել է:



Կարևոր է, որ հեղինակներն իրենց գործունեությունը իրականացնեն պայմանագրեր կնքելով, իսկ դատարան դիմելուց առաջ խորհրդակցեն փաստաբանի հետ: Տվյալ պարագայում, եթե կողմերի միջև լիներ կնքված պայմանագիր, ապա երկու կողմն էլ չէին զրկվի իրենց ֆինանսական ակնկալիքներից՝ Արթուր Գալստյանը կստանար հեղինակային վարձատրություն, իսկ Գևորգ Մարտիրոսյանը չէր կորցնի գումարը, որը ներդրել էր տեսահոլովակի ստեղծման համար:

Գումարային պահանջ ներկայացնելիս, երբ կողմը պահանջում է փոխհատուցել իրեն հասցված վնասը, կողմը չի կարող նշել ինչ-որ արժեք՝ առանց դա հիմնավորելու: Օրինակ, տվյալ պարագայում, վնասի փոխհատուցումը կարող էր բավարարվել, եթե Արթուր Գալստյանը ցույց տար այլ կատարողների հետ պայմանագրեր, որով նա երաժշտության և խոսքերի օգտագործման համար վարձատրություն է ստանում 2,000,000 ՀՀ դրամի չափով:

Հատկանշական է նաև այն պնդումը, որ Գևորգ Մարտիրոսյանը չէր ստանում եկամուտ, ուստի, չպետք է վճարեր: Այս թյուրըմբռնումը հաճախ է հանդիպում: Հարկավոր է նշել, որ անկախ այն հանգամանքից, դուք ստանում եք ինչ-որ եկամուտ այլ անձի հեղինակային իրավունքի օբյեկտն օգտագործելիս, թե չեք ստանում, այդօրինակ պայմանագրերը մեծամասամբ հատուցելի են լինում, առավել ևս, եթե հեղինակը վարձատրություն ստանալու պահանջ է ներկայացնում:





ԳՈՐԾ՝  
ԵԴ/6284/02/18

 **ՀԱՅՅՎՈՐ**

 **ՊԱՏԱՄԻԱՆՈՂ**

 **ՊԱՀԱՆՋ**

Անահիտ Ղազարյան (Fashion drug),  
«ՅՈՒՄԱՆ» ՍՊԸ

Գայանե Զանվելյան

Յեղիսակությունը ճանաչելու, հեղիսակային աշխատանքների խեղաթյուրումը, աղճատումը, աղավաղումը կամ փոփոխումը դադարեցնելու և հեղիսակային իրավունքի օբյեկտի անօրինական օգտագործմամբ պատճառված վնասի դիմաց փոխհատուցում ստանալու պահանջի մասին

Անահիտ Ղազարյանը և «Յուման» ՍՊ ընկերությունը, դիմելով դատարան, հայտնել էին, որ քաղաքացի Գայանե Զանվելյանը խախտել և շարունակում է խախտել համահայցվորների հեղինակային իրավունքները՝ անօրինական կերպով նմանակել է հեղինակի աշխատանքները, աղավաղել, փոփոխել, աղճատել է դրանք, յուրացրել է հեղինակի անվան իրավունքը, դրանք անօրինական հրապարակել և իրացրել է:

Անահիտ Ղազարյանը և «Յուման» ՍՊԸ-ն գտնում էին, որ Գայանե Զանվելյանը խախտել է հեղինակի անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները, և դատարանից խնդրել էին ճանաչել Ա. Ղազարյանի հեղինակային իրավունքը իր աշխատանքների նկատմամբ և Գայանե Զանվելյանից ի օգուտ համահայցվորների բռնագանձել հեղինակային իրավունքի խախտմամբ պատճառված վնասը:

Դատարան դիմելիս նրանք նշել էին, որ հեղինակ-ստեղծագործող Անահիտ Ղազարյանի աշխատանքները հայտնի են և պահանջված ոչ միայն ՀՀ տարածքում, այլ նաև նրա սահմաններից դուրս: Նա մասնակցել է բազմաթիվ մրցույթների և ցուցադրությունների: Հեղինակը ունի իր սեփական պաշտոնական կայքէջը <http://fashiondrug.am/> և կայքէջեր Ֆեյսբուք և Ինստագրամ սոցիալական ցանցերում: Հեղինակ Ա. Ղազարյանն իր ստեղծագործությունները հանրությանը հասանելի է դարձնում «FashionDrug» ապրանքային նշանի ներքո, որի իրավատերն ինքն է: Անահիտ Ղազարյանն իր հեղինակային գույքային իրավունքները և դրանց պաշտպանությունը հեղինակային պայմանագրի հիման վրա 2018 թվականին փոխանցել է «Յուման» ՍՊ ընկերությանը:

Սկսած 2017 թվականի վերջին ամիսներից և 2018 թվականի տարեսկզբից, հեղինակի հաճախորդների, գործընկերների կողմից Անահիտ Ղազարյանը սկսել է ստանալ նամակներ, որ շուկայում առկա են Անահիտ Ղազարյանի հեղինակային աշխատանքների խեղաթյուրված, աղճատված, աղավաղված կամ փոփոխված տեսակների նմանակված նմուշներ, և որ Ֆեյսբուք, Ինստագրամ սոցիալական հարթակներում այդ աշխատանքները հրապարակված են ոմն Գայանե Զանվելյանի կողմից՝ «GJanvelyan's Handmade» մակագրությամբ: Հետագայում արդեն այս աշխատանքները սկսել են տարածվել Երևան քաղաքի մի շարք վաճառակետերում: Հաշվի առնելով էլեկտրոնային հարթակով սպառողների իրազեկման ծավալները և այդ տեղեկատվության արագ տարածումը, Անահիտ Ղազարյանը սկսել է իր հաճախորդներից պարբերաբար ստանալ ծանուցումներ և հետամուտ է եղել այս բարձրացված խնդրին: Հեղինակ Անահիտ Ղազարյանն այս մասին տեղեկացրել է իր հեղինակային գույքային իրավունքների իրավատեր «Յուման» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Առուստամյանին, որը պարզել է, որ պատասխանողը հետևյալ հղումներով կատարված հրապարակումների

<https://www.facebook.com/gj.handmade>[https://www.instagram.com/gjanvelyan\\_](https://www.instagram.com/gjanvelyan_handmade/)

[handmade/](https://www.facebook.com/gj.handmade/), GJanvelyan's Handmade accessories, ինչպես նաև Երևան քաղաքի ստորև նշված հասցեներում տեղակայված վաճառակետերից իրացնում է Ա. Ղազարյանի հեղինակային աշխատանքների նմանակված օրինակները աղավաղումներով և «GJ handmade Accessories» մակագրությամբ, առանց հղում կատարելու հեղինակի անվանը: Իրացման արժեքը զգալի չափով ցածր էր հեղինակի պաշտոնական կայքէջում հրապարակված բնօրինակների արժեքից: Կողմերը մինչ դատարան դիմելը փորձել են արտադատական կարգով վեճը հարթել, սակայն ըստ նրանց՝ բանակցային հարթության վրա Գայանե Զանվելյանի հետ չի հաջողվել խնդիրը կարգավորել: Ա. Ղազարյանի հեղինակային աշխատանքները և Գ. Զանվելյանի կողմից դրանց նմանակված և իրացված նմուշները ներկայացվել էին ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՊԱԿ-ին՝ դրանց նմանության վերաբերյալ մասնագիտական կարծիքի համար: Ա. Ղազարյանի հեղինակային աշխատանքները, որոնց բնօրինակների արժեքները հրապարակված են վերջինիս պաշտոնական կայքէջում [/http://fashiondrug.am/](http://fashiondrug.am/) և կցված են հայցադիմումին, պատասխանող Գ. Զանվելյանն իրացրել է 5000-ական դրամով:

### Անվանումներ և գին.

Բրոշ «Մորելխիկ-ճպուռ»	20,000 ՀՀ դրամ
Բիժու «Աղջիկ»	20,000 ՀՀ դրամ
«Ծաղիկ Կակաչ»	20,000 ՀՀ դրամ
«Տերև»	20,000 ՀՀ դրամ
Անձրևանոց	20,000 ՀՀ դրամ
«Շունիկ»	15,000 ՀՀ դրամ
Ընդամենը	5,115,000 ՀՀ դրամ

Պատճառված վնասը, համաձայն վերը նշված գնացուցակի, կկազմի  $115.000 \times 2 = 230.000$  (երկու հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ: ՀՀ մտավոր սեփականության գործակալության 11.04.2018 թվականի Արդյունաբերական նմուշի գրանցման մասին որոշմամբ՝ 29.12.2017 թվականի թիվ 20170056 հայտով հայտատու և հեղինակ Անահիտ Ղազարյանի 45 տարբերակ բրոշների արդյունաբերական նմուշը գրանցվել է և տրվել վկայագիր:

Դատարանը, ուսումնասիրելով նշված փաստերը և կողմերի դիրքորոշումները, նշել է, որ Անահիտ Ղազարյանի հեղինակային իրավունքները ծագել են նրա ստեղծագործությունների ստեղծման փաստի ուժով, դրանք ի պահ են հանձնվել «Հայհեղինակ» հեղինակային և հարակից իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարվող ՀԿ-ում, և տրվել է հեղինակի գրանցման թերթիկ, իսկ Անահիտ Ղազարյանի կողմից ՀՀ մտավոր սեփականության գործակալություն ներկայացված հայտերի վերաբերյալ տրվել է արդյունաբերական նմուշի վկայագիր: Հետևաբար, անհիմն է Անահիտ Ղազարյանի և «Յուման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պահանջն ընդդեմ Գայանե Զանվելյանի՝ թվով 262 անուն աշխատանքների նկատմամբ իր հեղինակային իրավունքը ճանաչելու պահանջի մասին:

Դատարանը նաև նշել է, որ ինչ վերաբերում է հեղինակային իրավունքի խախտմամբ պատճառված վնասի հատուցմանը, որի վերաբերյալ ներկայացված հայցով Գայանե Զանվելյանին պահանջ է ներկայացվել 230.000 ՀՀ դրամ գումարի չափով (բրոշ «Մորեխիկ-ճպուռ»՝ գինը 20,000 ՀՀ դրամ, բիժու «Աղջիկ»՝ գինը 20,000 ՀՀ դրամ, «Ծաղիկ Կակաչ»՝ գինը 20,000 ՀՀ դրամ, «Տերև»՝ 20,000 ՀՀ դրամ, «Անձրևանոց»՝ 20,000 ՀՀ դրամ, «Շունիկ»՝ 15,000 ՀՀ դրամ, որոնց ընդհանուր գումարը կազմում է 115,000 ՀՀ դրամ, հաշվարկել պատճառված վնասը  $115.000 \times 2 = 230,000$  ՀՀ դրամ), պահանջն այս մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

ՀՀ մշակույթի նախարարության «Մշակույթային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությամբ՝ երկու անձանց կողմից պատրաստված բրոշներն ունեն նույնանման լուծումներ թե՛ ձևի, թե՛ օգտագործված նյութի, թե՛ բովանդակության առումներով, առկա են միայն չափերի և հարդարանքի աննշան տարբերություններ:

Վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը:

Պատասխանող Գայանե Զանվելյանը խախտել է համահայցվորների հեղինակային իրավունքները՝ յուրացնելով Անահիտ Ղազարյանի անունը և Անահիտ Ղազարյանին և նրա գույքային իրավունքների իրավատեր «Յուման» ՍՊԸ-ին գրկելով հեղինակային իրավունքի օգտագործման դիմաց հատուցում ստանալու օրենսդրորեն ամրագրված իրավունքից: Պատասխանողն անբարեխղճորեն օգտագործել է հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող դիզայներական աշխատանքների հեղինակության՝ անվան իրավունքը, դրանց օգտագործման՝ այդ թվում հրապարակման, իրացման իրավունքներն առանց հեղինակի և իրավատիրոջ թույլտվության և վարձատրության:

Դատարանն արձանագրում է, որ վերը շարադրված փաստերի համադրությամբ հաստատված համարելով Գայանե Զանվելյանի կողմից հայցվորին վնաս պատճառելու փաստը, քանի որ Գայանե Զանվելյանը որևէ կերպ չի ապացուցել, որ վնասն իր մեղքով չի պատճառվել, ուստի վերջինս չի կարող ազատվել այն հատուցելու պարտականությունից: Անդրադառնալով վնասի չափին՝ Անահիտ Ղազարյանը ներկայացրել է 230,000 ՀՀ դրամի պահանջ, որի դեմ Գայանե Զանվելյանը առարկություններ չի ներկայացրել: Ուստի դատարանը ողջամիտ է համարել պատասխանողից որպես պատճառված վնասի հատուցում 230,000 ՀՀ դրամի չափով գումարի բռնագանձումը:

*Տվյալ պարագայում մենք տեսնում ենք, թե որքան էական է, որ հեղինակը ունենա զգալի ապացույցներ՝ իր ստեղծագործությունների պաշտպանության համար և ստեղծագործությունների արժեքի վերաբերյալ: Ի տարբերություն Նախորդ դատական գործի, որտեղ հայցվորը միայն արժեք էր նշել, դա ոչ մի բանով չհիմնավորելով, այս դեպքում Անահիտ Ղազարյանը հստակ ցույց է տվել, թե որքան արժեն հեղինակային իրավունքների օբյեկտները:*

*Տվյալ գործի շրջանակներում, բացի «Հայեղինակ» ՀԿ-ի կողմից տրված տեղեկանքից, Անահիտ Ղազարյանը ներկայացրել էր ապացույց առ այն, որ իր բրոշները գրանցված են որպես արդյունաբերական դիզայն: Որպես արդյունաբերական դիզայն՝ օրենքով սահմանված կարգով պահպանվում է իրի արտաքին տեսքը բնորոշող այն լուծումը, որը Նոր է և ինքնատիպ (արդյունաբերական դիզայնի պահպանունակության պայմանները):*

*Արդյունաբերական դիզայնի, ապրանքային նշանների, գյուտերի, աշխարհագրական նիւշների գրանցումով Հայաստանում զբաղվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակը (ՄՄԳ), որը Հայաստանի Հանրապետությունում գյուտերի և արդյունաբերական դիզայնի արտոնագրեր տրամադրելու և ապրանքային նշանների և աշխարհագրական նշումների գրանցման պետական մարմինն է: Այն նաև խորհրդատվություն է տրամադրում հեղինակային իրավունքի հարցերով:*

Արվեստի ներկայացուցիչները սովորաբար աշխատում են հեղինակային իրավունքի օբյեկտների հետ: Լինում է, որ Անսահիտ Ղազարյանի նման, նոր դիզայներական լուծումներ են գտնում, և կարող են դրանք գրանցել որպես արդյունաբերական դիզայնի նմուշ:

Կա ևս մեկ մտավոր սեփականության օբյեկտ, որը կարող է օգտակար լինել ստեղծարար մարդկանց, դա ապրանքային նշանն է: Ապրանքային նշանը նիշ է, որն օգտագործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայություններն այլ անձի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար:

Օրինակ, եթե անձը հանդես է գալիս կեղծանունով, ապա նա կարող է գրանցել իր կեղծանունը, որպես ապրանքային նշան, որպեսզի այլ անձինք չկարողանան օգտագործել իր կեղծանունը: Ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը տասը տարի է՝ հայտի ներկայացման թվականից հաշված: Գործողության ժամկետը կարելի է երկարաձգել անսահմանափակ անգամ:



ԳՈՐԾ՝  
ԵԿԴ/4050/02/15



31



17



 **ՀԱՅՅՎՈՐ**

 **ՊԱՏԱՍԽԱՆՈՂ**

 **ՊԱՀԱՆՋ**

**Խորեն Զավենի Հակոբյան**

**«Էդիթ Պրինտ» ՍՊԸ**

Հեղինակային իրավունքի  
խախտումները վերացնելու  
և պատճառված վնասի  
փոխհատուցման պահանջի մասին



Խորեն Զավենի Զակոբյանը հայազգի անվանի նկարիչ է, հարյուրավոր գրքերի նկարազարդման հեղինակ («Արևիկ», «Հայաստան», «Լույս», «Արեգ», «Սովետական գրող», «Նաիրի», «Գ-րդ հրաշալիք», «Ամարաս», «Տիգրան Մեծ», «Մաքսիմիան Արմենիա», «Մանմար» և այլ հրատարակչությունների կողմից տպագրված): Նրա վրձնին են պատկանում բազմաթիվ նկարներ, այդ թվում «Սասունցի Դավիթ» պատկերաշարը, որը բաղկացած է թվով 30 նկարից: 2002թ. «Էդիթ Պրինտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Խորեն Զակոբյանին առաջարկ է արվել պատկերաշարի նկարները զետեղել հայազգի գրող Մկրտիչ Խերանյանի «Սասնա տուն» (դյուցազնավեպ) նկարազարդ հրատարակության մեջ: Այդ կապակցությամբ Խորեն Զակոբյանը տվել է իր նախնական բանավոր համաձայնությունը՝ հետագայում այն գրավոր ձևակերպելու և հեղինակի վարձատրության չափը որոշելու պայմանով:

«Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը գործընթացը շարունակելու նպատակով այցելել է Խորեն Զակոբյանի արվեստանոց և լուսանկարել է նկարները՝ դրանց թվային տարբերակները վերցնելով իր հետ:

Խորեն Զակոբյանին անհայտ պատճառներով հայ ժողովրդական դյուցազնավեպի Մկրտիչ Խերանյանի հեղինակած տարբերակը այդպես էլ լույս չի տեսնում, իսկ Խորեն Զակոբյանի հետ էլ նկարները այլ ստեղծագործություններում օգտագործելու վերաբերյալ որևէ պայմանագիր կամ պայմանավորվածություն պատասխանողի կողմից ձեռք չի բերվում:

2008 թվականին «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն հրատարակում է հայազգի ակադեմիկոս Կ.Մելիք-Օհանջանյանի խմբագրությամբ «Սասնա Ծռեր. ինը ընտիր պատումներ» ժողովածուն հայերեն-ռուսերեն տարբերակով: Այս ժողովածուի յուրաքանչյուր գլխում տպագրվում են նաև Խորեն Զակոբյանի վրձնին պատկանող երեքական նկարներ: Ընդ որում, սա այն պայմաններում, երբ բացակայել է Խորեն Զակոբյանի համաձայնությունը իր նկարներն օգտագործելու կապակցությամբ, որևէ վարձատրության չափ չի համաձայնեցվել և չի կնքվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան պայմանագիր հեղինակային իրավունքի օբյեկտները՝ տվյալ դեպքում՝ նկարներն օգտագործելու վերաբերյալ: Փոխարենը, «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ի տնօրեն Մկրտիչ Կարապետյանը, տեղեկանալով, որ Խորեն Զակոբյանն իմացել է իր իրավունքների խախտման մասին և ունի առարկություններ, Խորեն Զակոբյանին իբրև նախնական վարձատրություն տվել է 400 ԱՄՆ դոլար գումար՝ խոստանալով մոտ ապագայում ևս այցելել և վճարել էականորեն ավելի մեծ գումար՝ որպես հատուցում նկարները տպագրելու համար: Սակայն «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ի տնօրենն այդպես էլ չի այցելել և չի վճարել որևէ գումար: Ավելին, 2015թ.-ին «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն ժողովածուն տպագրել է արդեն հայերեն-ֆրանսերեն տարբերակով՝ կրկին օգտագործելով Խորեն Զակոբյանի նկարները, այս անգամ ևս առանց վերջինիս



համաձայնության: Ընդ որում, նկարներն օգտագործվել են՝ աղավաղելով դրանց իրական տեսքը: Մասնավորապես, նկարները տպագրված են սև-սպիտակ, չնայած ներդիրների տպագրությունը քառագույն է, և չնայած բնագրերը գունավոր են և նախատեսված չեն սև-սպիտակ տպագրության համար: Ըստ այդմ՝ խախտվել է պատկերաչարի հաջորդականությունը:

Օգտագործված 27 նկարներից 18-ը տպագրված են շուռ տված՝ հայելային, որտեղ հերոսները ձախլիկ են: Օրինակ, Նույն պատկերում կազմի վրա Սասունցի Դավիթը սուրը աջ ձեռքով է բռնում, իսկ գրքի մեջ՝ ձախ ձեռքով (տե՛ս գրքի էջ 430): Նկարների բնագրերը քառանկյուն են, սակայն գրքում դրանք դրվել են կլոր շրջանակի մեջ՝ դուրս թողնելով պատկերի զգալի մասը և այդպիսով աղավաղելով դրանց էսթետիկական արժեքը:

Որոշ դեպքերում էլ նկարները համակարգչի օգտագործմամբ շրջանի մեջ տեղավորելու նպատակով դրանք կողքերից սեղմվել են՝ աղավաղելով պատկերը (տե՛ս գրքի 197, 291, 473, 559 էջերը և այլն):

Հարկ է նշել, որ դատարան դիմելու պահին ժողովածուն գտնվում էր ազատ վաճառքում ՉՀ տարածքում: Մասնավորապես՝ այն վաճառվում էր ՉՀ տարածքում գործող գրախանութներում, ինչպես նաև այն հնարավոր էր ձեռք բերել անհատ գրավաճառներից: Ավելին, պատասխանողը գրքի վաճառքը խրախուսում է և այն ձեռք բերելու առաջարկ ունի տեղադրած իրեն պատկանող [www.editprint.am](http://www.editprint.am) ինտերնետային կայքում, որտեղ նշված է, որ գրքի մեկ հատը վաճառվում է 26.000 ՉՀ դրամով, և թե որ պահեստում է գիրքն առկա:

2015 թվականին հրապարակելով ժողովածուն՝ «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն խախտել է Խորեն Հակոբյանի հեղինակային գույքային իրավունքները, մասնավորապես՝ հեղինակային իրավունքի օբյեկտի օգտագործումն անօրինական է, եթե նախապես ձեռք չի բերվել դրա հեղինակային կամ հարակից իրավունքների իրավատիրոջ համաձայնությունը: Տվյալ դեպքում «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ի կողմից նման համաձայնություն չի ստացվել Խորեն Հակոբյանից: Ավելին՝ «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն, նախկինում քաջատեղյակ լինելով Խորեն Հակոբյանի մտադրության մասին՝ համապատասխան վարձատրության դիմաց թույլատրելու նկարները տպագրել մեկ այլ ժողովածուում, 2008թ.-ին և 2015թ.-ին դրանք ապօրինաբար վերարտադրել է ժողովածուում, իսկ այժմ էլ ակտիվորեն զբաղված է ժողովածուի վաճառքով, որն ի դեպ, զուգահեռաբար զուգորդված լինելով ֆրանսերեն թարգմանությամբ, ուղղված է ոչ միայն ՉՀ շուկայում դրա իրացմանը, այլև որպես թիրախ ընտրել է նաև ֆրանսախոս հանրությանը:

Չարկ է նշել նաև, որ նույն կերպով և նույն տրամաբանությամբ, 2008թ. հրատարակված ժողովածուն ուղղված է եղել նաև ռուսախոս հանրությանը:

Խորեն Յակոբյանը համարում էր, որ «Էդիթ Պրինս» ՍՊԸ-ի գործողությունների արդյունքում խախտվել են իր հեղինակային գույքային իրավունքները, ՉՉ տարածքում և ինտերնետային շուկայում ակտիվորեն վաճառվել և վաճառվում են ժողովածուի՝ ինչպես 2008թ., այնպես էլ 2015թ. հրատարակությունները: Նման պայմաններում բացակայում է իր և «Էդիթ Պրինս» ՍՊԸ-ի կամ որևէ այլ անձի միջև կնքված հեղինակային պայմանագիրը, որով էլ պետք է թույլատրվեր հեղինակային իրավունքի օբյեկտների նման կերպով օգտագործումը, այն էլ հեղինակին տրամադրվող վարձատրության դիմաց: Նա նշել է, որ մինչև դատարան դիմելու օրը որևէ փոխհատուցում «Էդիթ Պրինս» ՍՊԸ-ի կողմից նկարների օգտագործման և վերարտադրության համար չի ստացել:

Սովորական պայմաններում նկարների նման վերարտադրության համար կկնքվեր հեղինակային պայմանագիր, և յուրաքանչյուր նկարի օգտագործման համար հայցվորը կստանար 110,000 ՉՉ դրամ:

Ի պատասխան հայցադիմումի՝ «Էդիթ Պրինս» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալ դիրքորոշումը. 2002 թվականին պատասխանող Խորեն Յակոբյանին առաջարկ է արել Նրա թվով 30 նկարները տպագրել և զետեղել հայազգի գրող Մկրտիչ Խերանյանի «Սասնա տուն» նկարազարդ հրատարակության մեջ: Պայմանավորվածության համաձայն՝ այդ նկարների տպագրման համար նկարչին վճարվել է 160,000 ՉՉ դրամ, որը համարժեք է 400 ԱՄՆ դոլարի, որից հետո նկարիչը թույլատրել է այդ նկարները լուսանկարել՝ վերածելով թվային տարբերակների, ինչն արդեն հաստատում է կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածության մասին:

Այդ ժամանակահատվածում բանակցություններից հայտնի է դարձել, որ Բեյրութում անցկացվել էր նկարչի կողմից կազմակերպված ցուցահանդես, որտեղ ցուցադրված են եղել նաև այդ նկարները և ազատ վաճառվել են: Այսինքն, ցուցահանդես կազմակերպելով և վաճառելով որոշակի քանակությամբ նկարներ՝ վերջիններս դարձել են հանրության կողմից ճանաչված և օգտագործելի՝ առանց հեղինակի հետ որևէ պայմանագիր կնքելու, ինչի մասին տեղյակ է եղել հեղինակը:

Չտապալում նկարները տպագրվել են ժողովածուի տեսքով, ֆրանսերեն-հայերեն տարբերակով, և շնորհանդեսը կայացել է Մատենադարանում, որին մասնակցել է անմիջապես նկարիչը, ստացել տպագրված գիրքը՝ որպես հուշանվեր:

Ամբողջ ժամանակահատվածում վաճառված է եղել թվով 22 օրինակ գիրք: Խորեն Յակոբյանի կողմից ուղարկված նախապահանջը ստանալուց հետո «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն հեռախոսով կապվել է հայցվորի հետ և, վրդովված լինելով նկարչի պահանջներից, պատռել գրքերի մնացած օրինակների նկարները: Այսինքն, Խորեն Յակոբյանի կողմից ներկայացված պահանջը՝ «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ի մոտ առկա ժողովածուի տպագրությունն արգելելու, ժողովածուի արդեն իսկ տպագրված, սակայն դեռևս չվաճառված օրինակները ոչնչացնելու մասով, արդեն իսկ կատարվել էր:

Վկայակոչելով «Յեղիևակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածները՝ «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը դատարանին հայտնել է, որ ինչ վերաբերում է պատասխանողից հօգուտ հայցվորի 2,970,000 ՀՀ դրամ գումար որպես հեղինակային իրավունքի խախտման համար պատճառված վնասի հատուցման բռնագանձման պահանջին, ապա հարկ է համարում նշել, որ իրենց կողմից դեռ 2002թ.-ին ձեռք բերված պայմանավորվածության համաձայն և իր կողմից այդ վիճելի նկարների համար հեղինակին վճարված գումարի չափով, ինչպես նաև հաշվի առնելով շուկայում նմանատիպ նկարների մոտավոր արժեքը, կարելի է փաստել, որ տեղի չի ունեցել հեղինակային իրավունքի խախտում, իսկ նկարները ձեռք են բերվել հեղինակի համաձայնությամբ՝ հետագա օգտագործման մասին վերջինիս գիտությամբ:

Խորեն Յակոբյանի կողմից ներկայացված և պահանջի հիմքում դրված նկարագրական մասից հնարավոր չէ ապացուցել հեղինակային իրավունքի խախտման փաստը: Յակոբյանը վիճելի նկարների օգտագործման / տպագրման/ համար հեղինակի կողմից 160,000 ՀՀ դրամին համարժեք 400 ԱՄՆ դոլարի ստացման փաստից կարելի է եզրահանգել, որ նկարների օգտագործումը և զետեղումը գրքում կատարվել է հեղինակի համաձայնությամբ, ինչի պարագայում բացակայում է հեղինակային իրավունքի խախտման փաստը:

Լսելով կողմերին՝ դատարանը եկել է հետևյալ եզրահանգումներին: Դիմելով դատարան՝ հայցվոր Խորեն Յակոբյանը խնդրել է պարտավորեցնել պատասխանող «Էդիթ Պրինտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, վերացնելու իր հեղինակային իրավունքների խախտումները՝ արգելելով ժողովածուի տպագրումը հայցվորի նկարները դրանց մեջ զետեղմամբ, ոչնչացնելով ժողովածուի արդեն իսկ տպագրված, սակայն դեռևս չվաճառված օրինակները, հետ կանչելով արդեն իսկ տպագրված և վաճառքում գտնվող ժողովածուի օրինակները, պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձել 2,970.000 ՀՀ դրամ գումար՝ որպես հեղինակային իրավունքի խախտման համար պատճառված վնաս, ինչպես նաև վճարված պետական տուրքի գումարը:

Գործի քննությամբ դատարանը պարզեց, որ հայցվոր Խորեն Չավենի Չակոբյանը հանդիսանում է հայազգի անվանի նկարիչ, գրքերի նկարազարդման հեղինակ («Արևիկ», «Չայաստան», «Լույս», «Արեգ», «Սովետական գրող», «Նաիրի» «Գ-րդ հրաշալիք» «Ամարաս» «Տիգրան Մեծ» «Մաքսիլլան Արմենիա», «Մանմար» և այլ հրատարակչությունների կողմից տպագրված): Նրա վրձնին են պատկանում բազմաթիվ նկարներ, այդ թվում «Սասունցի Դավիթ» պատկերաշարքը, որը բաղկացած է թվով 30 նկարից: 2002թ.-ին պատասխանող «Էդիթ Պրինտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից հայցվորին առաջարկ է արվել «Սասունցի Դավիթ» պատկերաշարքի նկարները զետեղել հայազգի գրող Մկրտիչ Խերանյանի «Սասնա տուն» (դյուցազնավեպ) նկարազարդ հրատարակության մեջ: Այդ կապակցությամբ հայցվորը տվել է իր նախնական բանավոր համաձայնությունը՝ հետագայում այն գրավոր ձևակերպելու և հեղինակի վարձատրության չափը որոշելու պայմանով: Պատասխանողի ներկայացուցիչը գործընթացը շարունակելու նպատակով այցելել է հայցվորի արվեստանոց և լուսանկարահանել է նկարները՝ դրանց թվային տարբերակները վերցնելով իր հետ: 2008 թվականին պատասխանողի կողմից հրապարակվել է հայազգի ակադեմիկոս Կ.Մելիք-Օհանջանյանի խմբագրությամբ «Սասնա Ծռեր. ինը ընտիր պատումներ» ժողովածուն հայերեն-ռուսերեն տարբերակով, որի յուրաքանչյուր գլխում տպագրվել են նաև հայցվորի վրձնին պատկանող երեքական նկարներ:

Դատարանը համարում է, որ հայցվորի պահանջը՝ որպես նրա հեղինակային իրավունքների խախտումներ՝ ժողովածուի տպագրումը հայցվորի նկարները դրանց մեջ զետեղմամբ արգելելու, ժողովածուի արդեն իսկ տպագրված, սակայն դեռևս չվաճառված օրինակները ոչնչացնելու, արդեն իսկ տպագրված և վաճառքում գտնվող ժողովածուի օրինակները հետ կանչելու մասով, ենթակա է բավարարման մասնակիորեն, այն է՝ ժողովածուի տպագրումը հայցվորի նկարները դրանց մեջ զետեղմամբ արգելելու մասով, իսկ ժողովածուի արդեն իսկ տպագրված, սակայն դեռևս չվաճառված օրինակները ոչնչացնելու, արդեն իսկ տպագրված և վաճառքում գտնվող ժողովածուի օրինակները հետ կանչելու մասով պետք է մերժել, նկատի ունենալով, որ նախ այդ կապակցությամբ դատարանին չեն ներկայացվել համապատասխան ապացույցներ, այնուհետև հայցվորին պատճառված վնասի հատուցման պահանջն իր մեջ ներառում է իրավունքների վերականգնում՝ պատճառված վնասը հատուցելու ձևով, որպիսի պահանջը դատարանի կողմից նույնպես բավարարվում է մասնակիորեն, ներքոշարադրյալ հիմնավորմամբ:

Դատարանն արձանագրում է, որ վերը շարադրված փաստերի համադրությամբ հաստատված է համարվում պատասխանողի կողմից հայցվորին վնաս պատճառելու փաստը, քանի որ, հակառակ վերոգրյալի, պատասխանողը որևէ կերպ չի ապացուցել, որ վնասն իր մեղքով չի

պատճառվել, ուստի և վերջինս չի կարող ազատվել այն հատուցելու պարտականությունից:

Անդրադառնալով վնասի չափին՝ հայցվորը ներկայացրել է 2,970,000 ՀՀ դրամի պահանջ, այսինքն՝ 27 նկար, յուրաքանչյուրը 110,000 ՀՀ դրամի հաշվարկով, ուսումնասիրելով որպես այդ պահանջը հիմնավորող ապացույց դատարանին ներկայացված պայմանագրերը, մասնավորապես՝ «Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ-ի և Խորեն Հակոբյանի միջև 01.09.2003թ. կնքված պայմանագիրը, համաձայն որի՝ հեղինակը պարտավորվում է Սարգիս Հարությունյանի «Հայ հին վիպաշխարհը» գրքի I հատվածի ձևավորումների /33 նկար/ հրատարակման իրավունքը զիջել հրատարակչությանը, հրատարակչությունը պարտավորվում է հեղինակային իրավունքը զիջելու դիմաց հեղինակին վճարել 320,000 ՀՀ դրամ, և «Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ-ի և Խորեն Հակոբյանի միջև 2004թ. կնքված պայմանագիրը, համաձայն որի՝ հեղինակը պարտավորվում է Սարգիս Հարությունյանի «Հայ հին վիպաշխարհը» գրքի II հատվածի ձևավորումների /72 նկար/ հրատարակման իրավունքը զիջել հրատարակչությանը, և հրատարակչությունը պարտավորվում է հեղինակային իրավունքը զիջելու դիմաց հեղինակին վճարել 800,000 ՀՀ դրամ, և հաշվի առնելով նախկինում կողմերի դրսևորած փոխադարձ համաձայնությունը, մասնավորապես՝ 400 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով հայցվորի հեղինակային իրավունքի օբյեկտները /նկարները/ պատասխանողի կողմից օգտագործելու փաստը, դատարանը ողջամիտ է համարում պատասխանողից որպես պատճառված վնասի հատուցում բռնագանձել 200.000 ՀՀ դրամի չափով գումար:

*Պայմանագրի բացակայությունը մեծամասամբ բերում է բացասական հետևանքների, քանի որ բանավոր պայմանավորվածությունով չես կարող խնդրի առաջացման դեպքում դատարանում ինչ-որ բան հիմնավորել:*  
*Սակայն, այս վեճի շրջանակում էական է տարբերակել 3 բան՝*

- Նկարի վաճառքը՝ որպես գույք,
- Լիցենզային պայմանագիրը և հեղինակային պայմանագիրը,
- Իրավունքի զիջման կամ օտարման պայմանագրի առանձնահատկությունը:

*Երբ դուք կտավ կամ ձեր ստեղծագործությունը վաճառում եք ցանկացած նյութական օբյեկտի վրա, դա դեռևս չի նշանակում, որ դուք հրաժարվում եք ձեր հեղինակային իրավունքներից:*

Ըստ «Յեղիևակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի՝ «Ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը գործում է անկախ այն նյութական օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքից, որում արտահայտված է ստեղծագործությունը: Յեղիևակի կողմից նյութական օբյեկտի օտարումը, որում արտահայտված է ստեղծագործությունը, ինքնին չի նշանակում հեղինակային իրավունքի օտարում»:

Տվյալ իրավիճակում, եթե նույնիսկ Խորեն Յակոբյանը ցուցահանղես-վաճառքի ժամանակ վաճառել է մի քանի նկար, դա չի նշանակում, որ այդ նկարները կարելի է տպագրել ինչ-որ տեղ, բազմացնել կամ օգտագործել, դա նշանակում է, որ կողմը գնել է գույք և կարող է օգտագործել այդ գույքը, օրինակ, ինչ-որ տեղ կախելով:

ՀՀ օրենսդրությունը նախատեսում է լիցենզային պայմանագրեր: Լիցենզային պայմանագրով՝ մտավոր գործունեության արդյունքի նկատմամբ բացառիկ իրավունք ունեցող կողմը մյուս կողմին թույլատրում է օգտագործել մտավոր սեփականության համապատասխան օբյեկտը: Լիցենզային պայմանագրում պետք է սահմանվեն վարձատրության չափը և (կամ) այն որոշելու կարգն ու դրա վճարման ժամկետները: Պայմանագիրը պետք է լինի գրավոր կարգով կնքված:

Այլ անձինք ստեղծագործությունը կարող են օգտագործել միայն ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները կրող անձի (ստեղծագործության հեղինակ կամ այլ անձ, որին այդ իրավունքներն անցել են օրենքով սահմանված կարգով) թույլտվությամբ՝ հեղինակային պայմանագրի հիման վրա: Յեղիևակային պայմանագիրը, որը կարգավորում է իրավատիրոջ և ստեղծագործության օգտագործման թույլտվություն ստացած անձի փոխհարաբերությունները, հատուցելի է և կարող է լինել բացառիկ կամ ոչ բացառիկ:

Երբ ձեր կողմից կնքվում է իրավունքի գիջման կամ հեղինակային իրավունքի օբյեկտի նկատմամբ գույքային իրավունքների օտարման պայմանագիր, տվյալ դեպքում դուք զրկվում եք հետագայում ստեղծագործության վերաբերյալ թույլտվություններ տալուց, առևտրայնացնելուց, և ձեզ են մնում անձնական ոչ գույքային իրավունքները:

ԳՈՐԾ՝  
ԵՄԴ/0909/02/15



**ՀԱՅՑԿՈՐ**



**ՊԱՏԱՍԽԱՆՈՂ**



**ՊԱՀԱՆՋ**

Տարիել Աղաբեկի Կնյազյան

Սամվել Դանիելյան

Հեղինակային իրավունքի և գումարի բռնագանձման պահանջի մասին

---

Տարիել Կնյազյանը անգլերենի մասնագետ է և երկար տարիների ընթացքում գրել է «Անգլերեն բոլորի համար» լեզվաբանական դասագիրքը, որի նկատմամբ նա ունի հեղինակային իրավունք:

Տարիել Կնյազյանը 17.09.2014 թվականին Սամվել Դանիելյանի հետ կնքել է պայմանագիր, համաձայն որի՝ վերջինս պարտավորվել է «Անգլերեն բոլորի համար» լեզվաբանական դասագիրքը տպագրել 1000 օրինակով, որի համար Սամվել Դանիելյանին Կնյազյանը նախնական վճարել է 2,000 ԱՄՆ դոլար: Պայմանագրի ուժով աշխատանքները պետք է իրականացվեին 17.09.2014 թվականից մինչև 15.11.2014 թվականն ընկած ժամանակահատվածում, գրքերի վաճառքից հետո Դանիելյանին պետք է վճարվեր մնացած գումարը: Սակայն, ըստ Կնյազյանի՝ Դանիելյանն իր պարտավորությունը չի կատարել, նախնական վճարված 2,000 ԱՄՆ դոլար գումարն ու «Անգլերեն բոլորի համար» լեզվաբանական դասագրքի էլեկտրոնային կրիչն իրենից վերցրել է ու փախել արտերկիր: Կնյազյանը դիմել է դատարան, խնդրելով դատարանից՝ Դանիելյանից բռնագանձել 2,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և պարտավորեցնել վերադարձնել «Անգլերեն բոլորի համար» լեզվաբանական դասագրքի էլեկտրոնային կրիչը:

Դատարանը որոշել է, որ գումար բռնագանձելու մասին Կնյազյանի պահանջը ենթակա է բավարարման, քանի որ.

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների և պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:


Հատկանշական է, որ հայցադիմումին կից ներկայացված ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության կենտրոնական բաժնի 20.03.2015 թվականի թիվ 30/41223 գրության համաձայն՝ Կնյազյանին հայտնվել է այն մասին, որ իր և պատասխանողի միջև առկա հարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ և ենթակա են լուծման դատական կարգով: Միաժամանակ հայտնվել է այն մասին, որ պատասխանողը բացակայում է ՀՀ-ից:

Սակայն գործի քննության վայրի և ժամանակի մասին Դանիելյանին ուղարկված ծանուցագրի հետադարձ ծանուցման ուժով, վերջինս դատական ծանուցագիրը ստացել է 15.04.2015 թվականին և դատավարական օրենքով նախատեսված երկշաբաթյա ժամկետում հայցադիմումի պատասխան չի ներկայացրել, դատարան չի ներկայացել, գործի քննությանը չի մասնակցել և Կնյազյանի վկայակոչած փաստերը չի վիճարկել:



Դատարանը հայցադիմումի պատասխան չներկայացնելը գնահատել է որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում:  
«Անգլերեն բոլորի համար» լեզվաբանական դասագրքի էլեկտրոնային կրիչը վերադարձնելուն պարտավորեցնելու մասին հայցապահանջները դատարանը ևս բավարարել է:

*Այս գործի հանգամանքներից պարզ է դառնում, թե ինչ կարևոր է ունենալ գրավոր պայմանագիր, որտեղ արտացոլված կլինի թե՛ պայմանագրի առարկան, թե՛ հստակ տեսանելի կլինեն վճարված գումարի չափը և փոխանցված նյութերը: Նման պայմանագրի բացակայության դեպքում հնարավոր է, որ Կնյազյանը չկարողանար ստանալ նման դատական ակտ:*



ԳՈՐԾ՝  
ԵԿԴ/5586/02/14



**ՀԱՅՅՎՈՐ**



**ՊԱՏԱՍԽԱՆՈՂ**



**ՊԱՐԱՆՋ**

Անուշ Զիվանի Գասպարյան

Ռազմիկ Ամյան

Հեղինակային իրավունքը խախտող գործողության վերացման և այդ խախտման հետևանքով ծագած վնասի հատուցման պահանջի մասին

Անուշ Զիվանի Գասպարյանը հայցադիմում էր ներկայացրել դատարան ընդդեմ Ռազմիկ Ամյանի՝ հեղինակային իրավունքը խախտող գործողության վերացման և այդ խախտման հետևանքով ծագած վնասի հատուցման պահանջների մասին: Գործը վարույթ ընդունելուց հետո Անուշ Գասպարյանը հրաժարվել է հեղինակային իրավունքը խախտող գործողության վերացման հայցապահանջից և պնդել է վնասի հատուցման պահանջը:

Անուշ Գասպարյանը հայցադիմումում հայտնել է, որ ինքը հանդիսանում է կրկնուսույց: 2001 թվականի ընթացքում իտալերեն լեզվի ուսուցման դասընթաց է իրականացրել «Երիտասարդություն Եվրոպայի համար» հասարակական կազմակերպությունում՝ մի խումբ ուսանողների, այդ թվում՝ Նաև Ռիչարդ Մադլենյանի համար:

Իտալերեն դասընթացներից մեկի ժամանակ Ռիչարդ Մադլենյանը Անուշ Գասպարյանին առաջարկում է իր կողմից գրված երաժշտության համար երգի խոսքեր գրել իտալերեն լեզվով:

Անուշ Գասպարյանը իտալերեն լեզվով գրում է երգի խոսքերը և սույն տեքստը վերնագրում է ArrivederLa Signorina /Ցտեսություն, օրիորդ/: Անուշ Գասպարյանը 2001 թվականին իտալերեն լեզվով գրված ArrivederLa Signorina երգի տեքստը տրամադրում է Ռիչարդ Մադլենյանին և հայտնում, որ Նշված երգի խոսքերը գրել է սիրողական մակարդակով և չի ցանկանում, որ իր ստեղծագործությունը առանց իր իմացության և համաձայնության հրապարակվի, քանի որ այդ դեպքում անհրաժեշտ է կատարել որոշակի փոփոխություններ, ինչպես նաև սահմանել իր ստեղծագործության օգտագործման համար հեղինակային վարձատրության չափը:

Անուշ Գասպարյանը պատահաբար լսում է Ռազմիկ Ամյանի կատարմամբ իր հեղինակած ArrivederLa Signorina վերնագրով, ամբողջությամբ Նույն տեքստով երգը, որը, սակայն, վերնագրված է լինում ոչ թե ArrivederLa Signorina, այլ «Bella Signorina»:

Անուշ Գասպարյանը 15.12.2011 թվականին «Հայիեղինակ» հասարակական կազմակերպության հետ կնքում է պայմանագիր՝ տեքստով երաժշտական ստեղծագործությունների գույքային իրավունքների կառավարման մասին: Անուշ Գասպարյանի, որպես ArrivederLa Signorina երգի բառերի հեղինակի անուն- ազգանունը հիշատակվել է զանգվածային լրատվության միջոցում՝ «Առավոտ» թերթում, իսկ հեռուստատեսությամբ հիշատակվել է «Արմենիա» հեռուստաընկերության «Յեռուստառեստորան» ծրագրի շրջանակում: Անուշ Գասպարյանը կարծում է, որ վերոնշյալ երգի տեքստի օգտագործմամբ ակնհայտ է, որ Ռազմիկ Ամյանը ստացել է և՛ շահույթ, և՛ ճանաչում:

Անուշ Գասպարյանը նշել է, որ ArrivederLa Signorina /Աույն ինքը՝ «Bella Signorina»/ երգի խոսքերի օգտագործումը, հրապարակային կատարումը տեղի է ունեցել առանց հեղինակի՝ իր համաձայնության և թույլտվության, որի հետևանքով ինքը, որպես երգի հեղինակ, չի ստացել այն նյութական բարիքները, որոնք կարող էր օբյեկտիվորեն ստանալ: Անուշ Գասպարյանը դատարանին խնդրել է պատասխանողից բռնագանձել 1,000,000 ՀՀ դրամ գումար, որպես հոնորարի կամ վարձատրության կրկնակի չափով փոխհատուցում իրեն պատճառված վնասի դիմաց:

Պատասխանող Ռազմիկ Ամյանը դատական նիստին չի ներկայացել:

*Որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստեր՝ դատարանը առանձնացրել է հետևյալը:*

**1.** «Առավոտ» օրաթերթի 147/2766/8 օգոստոս 2006 թվականի Սամվել Դանիելյանի «Շուու-բիզնեսը մեծ ներդրումներ է պահանջում» վերնագրով հրապարակման համաձայն՝ Ռազմիկ Ամյանն Անուշ Գասպարյանի և Ռիչարդ Մադլենյանի հեղինակած երգով մասնակցել է 2006 թվականի հուլիսի 26-31-ը կայացած «Նոր Ալիք» միջազգային մրցույթին՝ ստանալով «Օրիգինալ երգի լավագույն կատարում» մրցանակը:

**2.** ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 11.10.2016 թվականի թիվ 16-0148Դ փորձագետի եզրակացության համաձայն՝ զուտ ապրանքագիտական տեսանկյունից հնարավոր չի եղել պարզել Ռազմիկ Ամյանի կատարմամբ հնչող «Bella Signorina» երգի բառերի շուկայական արժեքը՝ անհրաժեշտ և բավարարելակետային տվյալների բացակայության պատճառով:

Դատարանը համարեց, որ Անուշ Զիվանի Գասպարյանի՝ ընդդեմ Ռազմիկ Ամյանի՝ հեղինակային իրավունքը խախտող գործողության վերացման պահանջի մասով գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ 1,000,000 ՀՀ դրամ որպես խախտման հետևանքով ծագած վնասի հատուցումը ենթակա է մերժման:

Անդրադառնալով հայցվորի՝ 1,000,000 ՀՀ դրամ որպես հեղինակային իրավունքը խախտելու հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջին, դատարանը արձանագրում է հետևյալը:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը:

Մասնավորապես, վնասի հատուցման պահանջը պետք է լինի իրական, անհրաժեշտ և ողջամիտ:

**Իրական՝** նշանակում է, որ պահանջ ներկայացրած անձը պետք է փաստաթղթային ողջամիտ ապացույցներ ներկայացնի առ այն, որ վնասն իրականում գոյություն ունի, վնասի հատուցման պահանջը չի կարող հիմնված լինել ենթադրությունների, շահարկումների և ապագայում տեղի ունենալիք հնարավոր կամ անհնարին իրադարձությունների ու փաստերի վրա:

**Անհրաժեշտ՝** նշանակում է, որ պահանջ ներկայացրած անձը պետք է ապացուցի, որ այդ հատուցումն իրոք անհրաժեշտ է իր խախտված իրավունքները վերականգնելու համար և, որ ամենակարևորն է, պետք է ցույց տա իր կրած վնասների ու իր իրավունքների խախտման միջև պատճառահետևանքային կապը:

**Ողջամիտ՝** նշանակում է, որ վնասի հատուցման պահանջի չափը պետք է համարժեք լինի հենց այդ վնասներին, ինչը, բնականաբար, ևս հնարավոր է ապացուցել միայն հստակ փաստաթղթային եղանակով, բացառելով ենթադրությունները և շահարկումները»:

Դատարանը համարել է, որ այն դեպքում, երբ ստեղծագործությունը օգտագործվել է առանց իրավատիրոջ թույլտվության, ապա դրա հետևանքով կրած վնասները ենթակա են պարտադիր հատուցման ստեղծագործությունը օգտագործած անձի կողմից:

Օրենսդիրը սահմանել է նաև իրավատիրոջ պահանջով վճարվելիք գումարների չափը, այն է՝ հոնորարի կամ վարձատրության կրկնակի չափով, որը իրավատերը կստանար, եթե իրավախախտողը թույլտվություն ունենար հեղինակային իրավունքի օբյեկտի օգտագործման համար կամ խախտման հետևանքով պատճառված փաստացի վնասին համարժեք հատուցում, ներառյալ բաց թողնված օգուտը: Նշվածից հետևում է, որ առանց իրավատիրոջ թույլտվության ստեղծագործությունը օգտագործելու հետևանքով իրավատիրոջ կրած վնասների հատուցման համար անհրաժեշտ վավերապայման է հոնորարի կամ վարձատրության չափը, որի կրկնակին կստանար իրավատերը, և խախտման հետևանքով պատճառված վնասի չափը, ներառյալ բաց թողնված օգուտի իրական չափը:

Սույն դեպքում Անուշ Գասպարյանի կողմից որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույցով չի հիմնավորվել էական նշանակություն ունեցող հանգամանքը, որ հոնորարի կամ վարձատրության չափը կարող էր սահմանվել 500,000 ՀՀ դրամ, որի կրկնակին էլ պահանջվում է հայցվորի կողմից, կամ 1,000,000 ՀՀ դրամ գումարը կազմում է իրավունքի խախտման հետևանքով պատճառված վնասի իրական չափ:

Ավելին՝ սույն քաղաքացիական գործով նշանակված փորձաքննության արդյունքում ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից կազմված 11.10.2016 թվականի թիվ 16-0148Դ փորձագետի եզրակացության համաձայն՝ զուտ ապրանքագիտական տեսանկյունից հնարավոր չի եղել պարզել Ռազմիկ Ամյանի կատարմամբ հնչող «Bella Signorina» երգի բառերի շուկայական արժեքը՝ անհրաժեշտ և բավարար ելակետային տվյալների բացակայության պատճառով:

Վերոգրյալի համադրմամբ՝ դատարանն արձանագրում է, որ Անուշ Գասպարյանի կողմից ներկայացված հայցը բավարար ապացույցներով չի հիմնավորվել, ուստի այն ենթակա է մերժման:

Սույն գործով Անուշ Գրիգորյանը նաև դիմել է վերաքննիչ դատարան, որտեղ ստացել է մերժում, իսկ վճռաբեկ դատարանը բողոքը թողել է առանց քննության:

*Քանի որ ՀՀ-ում դեռևս չի գործում statutory damage-ը, այսինքն, ֆիքսված պատասխանատվության հնարավորությունը, ապա, որպեսզի հեղինակները կարողանան վնասն ապացուցել, նրանք պետք է ունենան պայմանագրեր: Եթե տվյալ պարագայում Անուշ Գասպարյանը ունենար այլ պայմանագրեր, որտեղ հստակ արտացոլված կլիներ, որ սույն հեղինակի աշխատանքը վաճառվում է 500,000 ՀՀ դրամով, ապա դատարանը իր ներկայացրած պահանջը կարող էր ընդունել:*

# ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԴԵՑՈՒՅՑ


Ստեղծագործ մարդիկ շատ հաճախ են մոռանում հեղինակային իրավունքի կարևորության մասին, քանի որ, հևարավոր է, չեն պատկերացնում, թե ինչ բարդությունների կարող են բախվել, եթե ժամանակին չզբաղվեն իրենց իրավունքներով, կամ ինչ եկամուտ կարող են ունենալ, եթե իրենց հեղինակային իրավունքների պաշտպանությանը ուշադիր լինեն:

Ի՞նչ միևնույն քայլեր պետք է կատարի հեղինակը, որպեսզի իր իրավունքները պաշտպանված լինեն:

## Պահպանողական քայլեր

Ձեր հեղինակային իրավունքի օբյեկտի, այսինքն, ստեղծագործության ստեղծումը պետք է ֆիքսել՝

- «Չայհեղինակ» հեղինակային և հարակից իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարվող հասարակական կազմակերպությունում ստեղծագործությունը ի պահ հանձնելու միջոցով,
- Կամ ստեղծագործության օրինակը փոստով ուղարկում եք ձեր հասցեին, չբացելով ծրարը՝ պահում եք այն, մինչև վեճի ժամանակ անհրաժեշտ լինի ներկայացնել (ֆիքսեք ձեզ մոտ, թե որ ծրարի մեջ ինչ ստեղծագործություն է, որ հարկ եղած դեպքում հենց դատարանը բացի անհրաժեշտ ստեղծագործությունով ծրարը):



## 1

Ներառեք հեղինակային իրավունքի մասին ծանուցումներ ձեր ստեղծագործություններում, եթե վարում եք սոցիալական ցանցերում էջեր կամ ունեք կայք, այնտեղ ևս ֆիքսեք հեղինակային իրավունքի վերաբերյալ ծանուցումը:



## 2

Օգտագործեք թվային իրավունքների պաշտպանության տեխնոլոգիաներ, ինչպիսիք են թվային ջրանիշները, DRM (թվային իրավունքների կառավարում)՝ ձեր բովանդակության չարտոնված պատճենումը կամ տարածումը կանխելու համար:



## 3

Անպայման կնքեք պայմանագրեր՝ նախ, որպեսզի ստեղծագործության օգտագործումը կամ օտարումը հստակ լինի, և որ, եթե բախվեք խնդրի, և հոնորարի ապացուցման անհրաժեշտություն առաջանա, ունենաք անհրաժեշտ փաստերը:



## 4

Պահպանեք մանրամասն փաստաթղթեր ձեր բոլոր ստեղծագործությունների, պայմանագրերի, լիցենզային պայմանագրերի, հեղինակային իրավունքի մասին ծանուցումների և ձեր հեղինակային իրավունքի պաշտպանության հետ կապված փաստաթղթերի վերաբերյալ:



## 5

### Պաշտպանողական քայլեր

Եթե ձեր հեղինակային իրավունքի խախտում եք հայտնաբերում, անմիջապես քայլեր ձեռնարկեք ձեր շահերը պաշտպանելու համար, ներառյալ խախտման մասին ծանուցումներ ուղարկելը և հայցեր ներկայացնելը:



## 6

Անհրաժեշտության դեպքում դիմեք մասնագետների, մտավոր սեփականության իրավունքի ոլորտում մասնագիտացված իրավաբանների, որպեսզի ձեր խնդրին մասնագիտական լուծում տրվի:



## 7





AGBU  
ARMENIA



Հեղինակ՝ Անի Դավթյան  
Մասնագիտական խմբագիր՝ Նարեկ Վ. Թովմասյան  
Խմբագիր՝ Հերիքնազ Հարությունյան  
Լուսանկարներ՝ «Ֆոտոլուր» լրատվական գործակալություն  
Դատական գործեր՝ DataLex դատական տեղեկատվական համակարգ